



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ՓՈՔՐ ՀԷԿ-ԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներ՝ Վիկտորյա Բուռնազյան, Տաթևիկ Գրիգորյան, Սոնիկա Երիցյան
Փորձագետ՝ Ինգա Զարաֆյան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում դրամաշնորհ N 18571: Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Համառոտագիր

Փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) զարգացման սխեմայի իրականացման հետ զուգահեռ Հայաստանում առաջացել են ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի, կենսաբազմազանության, հատուկ պահպանվող տարածքների, լանդշաֆտների, բնակչության սոցիալական սոցիալական վիճակի եւ կյանքի որակի հետ կապված խնդիրներ: Այս ոլորտի վերաբերյալ կան տարբեր ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում են ՓՀԷԿ-երի զարգացման հեռանկարները, ֆինանսավորման աղբյուրները, ջրօգտագործման եւ հողօգտագործման իրավական ասպեկտները, էներգետիկ անվտանգությանն ուղղված փոքր հիդրոէներգետիկայի զարգացումը, էկոլոգիական ռիսկերը՝ կապված կենսաբազմազանության կորստի, գետային էկոհամակարգերի վիճակի վատթարացման հետ եւ այլն:

Այս հետազոտության նպատակն է ընդհանրականից մասնավորեցնել ՓՀԷԿ-երի խնդիրները եւ ցույց տալ առկա խնդիրները ստույգ դեպքերի ուսումնասիրման հիման վրա: Այսպիսով, հետազոտության մեջ ներառված են՝

- 25 ՓՀԷԿ-ի նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերլուծությունը
- 47 գետերի էկոլոգիական ծանրաբեռնվածությունը 100 ՓՀԷԿ-երով
- ՓՀԷԿ-երի համապատասխանությունը «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիային, ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիային (Օրհուսի կոնվենցիա), ՀՀ ջրային եւ անտառային օրենսգրքերին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքներին
- ՓՀԷԿ-երի ազդեցության ենթակա 12 համայնքներում անցկացված սոցիալական հարցումների արդյունքները
- ՓՀԷԿ-երի ոլորտում պետական մարմինների գործունեության թափանցիկության եւ հաշվետվողականության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները
- ՓՀԷԿ-երի համապատասխանությունը միջազգային ֆինանսական ինստիտուտների սոցիալական եւ էկոլոգիական քաղաքականությանը:

Հիմնական արդյունքներ

- Նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականների (ՇՄԱԳ) վերլուծությունը ցույց տվեց, որ նախագծերը չեն համապատասխանում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաեւ իսխտում են բնապահպանական օրենսդրությունը՝ ՀՀ ջրային եւ անտառային օրենսգրքերը, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքները:
- ՓՀԷԿ-երի շահագործման հետեւանքով ուսումնասիրված 47 գետերից 28 գետերի ծանրաբեռնվածությունը նորմայի սահմանում է, 16-ը ճգնաժամային, 3-ը աղետալի վիճակում են:
- Հասարակական լսումներն իմիտացիոն բնույթ են կրում, որոշումներ կայացնելիս հաշվի չեն առնվում համայնքների բնակչության կարծիքները: Հասարակական լսումներն

անցկացվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի եւ Օրհուսի կոնվենցիայի դրույթների խախտմամբ:

- ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը ոչ թափանցիկ է աշխատում. մերժում է տրամադրել հասարակական լսումների արձանագրությունները, կարծիքներ եւ բնապահպանական փորձաքննական եզրակացություններ:
- Միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ երկխոսությունը ցույց տվեց, որ նրանք շահագրգռված են վարկի 100% մարմամբ, այլ ոչ թե շրջակա միջավայրի պահպանությամբ եւ սոցիալական վիճակի բարելավմամբ:

Առաջարկություններ

1. Փոխել ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 927-Ն որոշումը էկոլոգիական թողքի վերաբերյալ (որպեսզի էկոլոգիական թողքը 50 տոկոսից պակաս չլինի), որպեսզի գետային էկոհամակարգը պահպանվի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբեր 8-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու վերաբերյալ առաջարկության մասին» 1300-Ա որոշումը, որով ՓՀԵԿ-երի հզորության չափն ավելացել է 10-ից մինչև 30 Մվտ:

3. Որոշել ՓՀԵԿ-երի համար արգելված գոտիները, որոնք ընդգրկում են հատուկ պահպանվող տարածքներ, անտառային տարածքներ, սողանքային գոտիներ, ջրաբանական խցելի տարածքներ:

4. Արգելել նոր ՓՀԵԿ-երի կառուցումը եւ չերկարացնել կառուցված ՓՀԵԿ-երի լիցենզիաներն այն գետերի վրա, որոնք գտնվում են ճգնաժամային եւ աղետալի վիճակում գետի գերշահագործման պատճառով:

5. Սահմանել հստակ կարգ, որը թույլ կտա հաշվի առնել ազդակիր համայնքի բնակչության կարծիքը ՓՀԵԿ-ի կառուցման վերաբերյալ:

6. Միջազգային ֆինանսական ինստիտուտները մյուս շահագրգիռ կողմերի՝ ՀՀ բնապահպանության նախարարության, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ միասին պետք է պատասխանատվություն կրեն ՓՀԵԿ-երի գործունեության հետեւանքով առաջացած բացասական էկոլոգիական, սոցիալական հետեւանքների համար եւ ազգային ու միջազգային օրենսդրության խախտումների համար:

7. Ազատել Սեւանա լիճ թափվող գետերը փոքր ՀԵԿ-երից, արգելել այդ գետերի վրա նոր ՓՀԵԿ-երի կառուցումը, ապամոնտաժել անօրինական ՓՀԵԿ-երը եւ չերկարացնել գործող ՓՀԵԿ-երի լիցենզիաները:

8. Հրապարակային դարձնել ՓՀԵԿ-երին վերաբերող բոլոր պաշտոնական փաստաթղթերը՝ նախագիծ, հասարակական լսումների արձանագրություն, բնապահպանական փորձաքննական եզրակացություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տվյալներ.....	5
Կլիմայի փոփոխությունը և ՄԶՄ-ի կողմից հովանավորվող ՓՀԷԿ-երը.....	6
Գետերի ծանրաբեռնվածություն.....	7
ՓՀԷԿ-երի ռիսկերը	
Էկոլոգիական թողք.....	15
Անտառահատումներ.....	17
Սողանք.....	18
Կենսաբազմազանության կորուստ.....	19
Զբոսաշրջային վայրերի կորուստ.....	21
ՓՀԷԿ-երի ազդեցությունը սոցիալական վիճակի վրա	
Սոցիալական հարցումներ համայնքներում.....	22
Որոշումների ընդունման գործընթացի անթափանցիկությունը, բնապահպանական փորձաքննություն.....	25
Առաջարկություններ.....	29

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

Հայաստանում փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) կառուցումը համարվում է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն: ՓՀԷԿ-երի կառուցմամբ լրացվում է «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման», որը հաստատվել է 2009 թվականի հունվարի 22-ին՝ ՀՀ կառավարության նիստի N3 արձանագրային որոշման ընդունմամբ: Սխեմայով նախատեսվում է 115 ՓՀԷԿ-ի կառուցում:

Աղյուսակ¹

ՀՀ գետերի ավազանների անվանումը	ՓՀԷԿ-երի քանակը ավազանում	Տեղակայված գումարային հզորություն ՄՎտ	Միջին տարեկան արտադրանք մլն. կՎտժ	Աշխատա- ժամերի քանակը ժամ/տարի	ՓՀԷԿ գործակից %
Դեբեդ	33	25	91	3670	42
Աղստև	23	34	130	3843	44
Ախուրյան	4	11	28	2521	29
Քասախ	4	3	12	3570	41
Հրազդան	4	4	13	3089	35
Սևանա լիճ	11	10	43	4466	51
Ագատև Վեդի	5	5	19	3728	43
Արփա	4	12	35	2908	33
Որոտան	5	10	43	4131	47
Ողջի	14	20	76	4009	46
Մեղրի	8	13	50	3724	43
Ընդամենը	115	147	540	3677	42.0

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության եւ կառուցման համար լիցենզիա է տրվել 150 ՓՀԷԿ-ի²:

ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության տվյալներով՝ 2013թ. Հայաստանում արտադրվել է ընդհանուր 8,036,200,000 կվտ/ ժ էլեկտրաէներգիա, որից ՓՀԷԿ-երի բաժինը կազմել է 570,000,000 կվտ/ ժ(6,5%):

ՓՀԷԿ-երի շահագործման լիցենզիան վավեր է 15 տարի: Արտադրողը վաճառում է էլեկտրաէներգիան «Հայկական էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին հստակ սահմանված սակագնով: Բնական ջրահոսքերի վրա կառուցված ՓՀԷԿ-երի համար սակագինը հավասար է 20 դրամ / կՎտժ (\$4,9 ցենտ), ոռոգման համակարգերի վրա՝ 13,5 դրամ / կՎտժ (\$3,3 ցենտ), խմելու ջրի ջրակայանների վրա՝ 9 դրամ / կՎտժ (\$2,3 ցենտ): ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբեր 8-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու վերաբերյալ առաջարկության մասին» 1300 – Ա որոշմամբ փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորության չափն ավելացավ 3 անգամ՝ 10 Մվտ-ից հասնելով մինչև 30 Մվտ:³ Այսպիսով, նկատվում է ե՛ւ ՓՀԷԿ-երի թվի, ե՛ւ նրանց հզորությունների չափի աճ:

¹ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի պաշտոնական կայք՝ www.re2e2.am

² Տե՛ս Հավելված 2

³ ՀՀ կառավարության պաշտոնական կայք, <https://www.e-gov.am/gov-decrees/item/20207/>

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՁՄ-Ի ԿՈՂՄԻՑ ՀՈՎԱՆԱՎՈՐՎՈՂ ՓՇԷԿ-ԵՐԸ

«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) շրջանակներում խրախուսվում է փոքր ՀԷԿ-երի կառուցումը, քանի որ ՓՇԷԿ-երը ջերմոցային գազեր չեն արտանետում մթնոլորտ:

ՄՁՄ-ն ծրագրային մեխանիզմ է, որը նախատեսված է զարգացած երկրներում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման կամ կլանման նախագծերում ներդրումների խթանման համար: ՄՁՄ-ի նպատակներից են՝ «նպաստել «Կլիմայի փոփոխության մասին» կոնվենցիայի վերջնական նպատակի իրագործմանը, այն է՝ մթնոլորտում ջերմոցային գազերի կոնցենտրացիան կարգավորել այնպիսի մակարդակով, որով հնարավոր կլինի կանխարգելել կլիմայական համակարգում վտանգավոր մարդածին ազդեցությունները, աջակցել զարգացած երկրներին Կիոտոյի արձանագրության 3 հոդվածով սահմանված՝ արտանետումների սահմանափակման եւ նվազեցման իրենց պարտավորությունները կատարելու հարցում»:⁴

«Կիոտոյի արձանագրությունը և Մաքուր զարգացման մեխանիզմները էկոլոգիական հովանոցն են միջազգային զարգացման ֆինանսական ինստիտուտների համար: Ջարգացող երկրները, ինչպիսին է Հայաստանը, միջազգային շուկայում վաճառում են CO2 արտանետումների քվոտաները փոքր ՀԷԿ-երի արտադրած, այսպես կոչված, «մաքուր» էներգիայի հաշվին: Ընդ որում, կնքվում է պայմանագիր սերտիֆիկացված արտանետումների առք և վաճառքի մասին: Դա շահավետ բիզնես է, քանի որ քվոտաները վերավաճառվում են միջազգային շուկայում նույն միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ստեղծված միջնորդների միջոցով»:⁵

Հայաստանում ՓՇԷԿ-երի ֆինանսավորումը գրավիչ է նաեւ նրանով, որ ապահովվում է վարկի 100 տոկոսանոց մարում, էլեկտրաէներգիայի սպառման շուկայում մրցակցություն չկա, գործունեությունը շարունակական բնույթ է կրում, առկա է էլեկտրաէներգիայի համար բարձր սակագին: Հայաստանում ՓՇԷԿ-երի համար վարկեր են տրամադրում՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (EBRD), Ջարգացման գերմանական բանկը (KfW), Համաշխարհային բանկը, Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC): 2006 թվականին 25 ՓՇԷԿ-երի համար Կասկադ կրեդիտ բանկի միջոցով EBRD-ն տրամադրել է 7 միլիոն դոլլար վարկ, Համաշխարհային բանկը՝ 5 միլիոն դոլլար: Ամերիաբանկի միջոցով Միջազգային ֆինանսական կորպորացիան 2010թ-ին 15 միլիոն դոլլարի վարկ է տրամադրել 12 ՓՇԷԿ-ի համար: 2004թ-ին KfW բանկը ՓՇԷԿ-երի համար տրամադրել է 6 միլիոն եվրո, 2010թ-ին՝ 18 միլիոն եվրո, 2012թ-ին՝ 40 միլիոն եվրո: KfW բանկի միջոցներով Ֆինանսավորվել է 26 ՓՇԷԿ-ի նախագիծ:

Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայով խրախուսվում է ՓՇԷԿ-երի կառուցումը, սակայն իրականում Հայաստանում ՓՇԷԿ-երը նպաստում են կլիմայի փոփոխության բացասական գործընթացների արագացմանը, էկոհամակարգերի հավասարակշռության խախտմանը, անտառների, ջրային ռեսուրսների կորստին, սողանքային գործընթացների խթանմանը, կենսաբազմազանության վերացմանը: «Կլիմայի համամոլորակային փոփոխությունը եւ Հայաստանի տարածքում ներքին միկրոկլիմայական փոփոխությունները կարող են հանգեցնել հետևյալ հետևանքների.

- կանխատեսվող ջերմաստիճանի բարձրացման եւ տեղումների նվազման դեպքում պետք է սպասել կլիմայի չորացման աճ եւ անապատացման պրոցեսների արագացում
- սպասվում է գետերի տարեկան հոսքի նվազում 15% եւ Սևանա լճի մակերեսից գոլորշիացման ավելացում 13-14%...»:⁶

Ըստ Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայքի՝ ՄՁՄ խորհրդի կողմից Հայաստանում գրանցված են՝ «Արգիճի», «Եղեգիս», «Ջրածոր» ՓՇԷԿ-երի ծրագրերը: ՄՁՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության

⁴ Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք՝ <http://www.nature-ic.am/hy/>

⁵ Ջեկոյց՝ «Փոքր ՀԷԿ-երը միջազգային ֆինանսական ինստիտուտների հովանու ներքո», ԷկոԼուր, Երևան 2013թ.



⁶ Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք՝ <http://www.nature-ic.am/hy/>

կողմից հաստատվել է «Եղվարդ-2», «Հանքավան-1», «Սարավան» եւ «Հեր-Հեր», «Գեղարոտ» ՓՇԷԿ-երի ծրագրերը, Ամբերդ Կասկադ ՄՁՄ ծրագիրը, որը ներառում է «Ամբերդ 1, 2, 3» ՓՇԷԿ-երի կառուցումը, Կասկադ Կրեդիտ փոքրամասշտաբ ՇԷԿ-երի միավորված ծրագիրը, որով կառուցվել են «Այգեձոր-2», «Այրի», «Այգեգարդ», «Աղստեւ-1», «Լեռնապատ», «Վահագնի», «Չանախչի», «Լեռ էքս կասկադ» (1, 3, 4, 5, 6), «Բովաձոր», «Ապրես» ՓՇԷԿ-երը, Էներգոկոր փոքրածավալ համակցված ծրագիրը, որի շրջանակներում կառուցվել են՝ «Այրք-1», «Այրք-2», «Ավագան», «Էրիկ», «Ջերմուկ-2» ՓՇԷԿ-երը: Հաստատման փուլում են «Սեդվի 1» եւ «Սեդվի 2» ՓՇԷԿ-երի նախագծերը, որոնք կառուցվելու են Լոռու մարզում հոսող Կաճաճկուտ գետի վրա:

ԳԵՏԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՆՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 30.06.2011թ. 927-Ն որոշմամբ Հայաստանում ՓՇԷԿ-երի համար թույլատրվում է գետից դերիվացիոն խողովակների մեջ վերցնել 90%-ից ավելի ջուր: Սակայն Էկոլոգիական ստանդարտների համաձայն՝ գետից 20%-ից ավելի ջրառը բերում է գետի ճգնաժամային վիճակի, իսկ 40%-ից ավելին՝ աղետալի վիճակի: Սրանից ելնելով՝ մենք կարող ենք որոշել գետի վիճակը՝ հաշվելով, թե գետի երկարության որ տոկոսն է վերցված ՓՇԷԿ-ի խողովակների մեջ:

«ԷկոԼոյր» տեղեկատվական ՀԿ-ի «Էկոլոգիական ռիսկերի վերլուծության ինտերակտիվ մոդել»-ով՝ որոշվեց 47 գետի վրա 100-ի ՓՇԷԿ-երի ազդեցությունը: Արդյունքում պարզվեց, որ ՓՇԷԿ-երի շահագործման հետեւանքով 28 գետերի ծանրաբեռնավածությունը նորմայի սահմանում է, 16-ը ճգնաժամային, 3-ը աղետալի վիճակում են:



⁷ Էկոլոգիական ռիսկերի վերլուծության ինտերակտիվ մոդել՝ Տես՝ <http://www.ecolur.org/hy/an/?Page=1>

Մոդելի միջոցով պարզ դարձավ նաեւ, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կառուցման լիցենզիա ստացած ՓՀԷԿ-երի կառուցման դեպքում 5 գետ կհայտնվի ճգնաժամային վիճակում, 2-ը աղետալի, 2-ը նորմալ վիճակում:

Նորմայի սահմանում գտնվող 28 գետերից 4-ը մոտ են ճգնաժամային վիճակի: Այդ գետերն են՝

1. **Արտավան** գետ (երկարությունը՝ 19 կմ), EBRD-ի ֆինանսավորմամբ այս գետի վրա կառուցված է «Արտավան-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը 3721,5 մ է, ինչը կազմում է գետի 19.59%-ը:
2. **Խաչարձան** գետ (երկարությունը՝ 18 կմ), վրան կառուցված է «Խաչարձան» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը 2*1740 մ է, ինչը կազմում է գետի 19.33%-ը:
3. **Ծավ** գետ (երկարությունը՝ 27 կմ), գերմանական KfW բանկի միջոցներով այս գետի վրա կառուցված է «Ծավ» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը 4765 մ է, ինչը կազմում է գետի 17.65%-ը:
4. **Արգիճի** գետ (երկարությունը՝ 51 կմ), գերմանական KfW բանկի ֆինանսավորմամբ այս գետի վրա կառուցված է «Արգիճի» ՓՀԷԿ-ը: Դերիվացիայի երկարությունը 9527 մ է, ինչը կազմում է գետի 18.68%-ը:



Հատուկ դեպքի ուսումնասիրություն՝ «Արգիճի» ՓՀԷԿ

Մեւանա լիճ թափվող ամենամեծ գետի՝ Արգիճիի վրա «Արգիճի» ՓՀԷԿ-ի կառուցման նախագիծը հաստատվել է Հայաստանի ՄՁՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2006թ. նոյեմբերի 23-ին եւ ՄՁՄ գործադիր խորհրդի կողմից գրանցվել է 2008թ. փետրվարի 24-ին: Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն ավարտին է հասցվել 2006թ. հուլիսի 7-ին: «Արգիճի» ՓՀԷԿ-ի նախագիծը ներկայացված է եղել EBRD-ի ֆինանսավորմանը, սակայն ինչ-ինչ պատճառներով ՓՀԷԿ-ը չի կառուցվել եւ EBRD-ն վարկ չի տրամադրել: 2012թ-ին «Հիդրոկորպորացիա» ընկերության կողմից ՓՀԷԿ-ը կառուցվեց հին նախագծով եւ ֆինանսավորումը տրամադրեց գերմանական KfW բանկը Գերմանա-հայկական հիմնադրամի միջոցով: Բանկը հստակ չափանիշներ ունի ՓՀԷԿ-երի նախագծերի ընտրության հարցում. «ՓՀԷԿ-ը պետք է համապատասխանի գործող՝ այդ թվում շրջակա միջավայրին և սոցիալական հարցերին վերաբերող համապատասխան օրենքներին և կարգերին»:⁸ «Արգիճի» ՓՀԷԿ-ը կառուցվեց ժամկետնանց փաստաթղթերով, բացի ՄՁՄ-ի թույլտվությունից, որն անժամկետ է եւ պարտադիր չէ ՓՀԷԿ-ի կառուցման պարտադիր փաստաթղթերի ցանկում: Խախտվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

⁸ Գերմանա-հայկական հիմնադրամի (GAF) պաշտոնական կայք <http://gaf-re-shpp.am/index.php?id=9&L=1>

վորձաքննության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետը եւ 12-րդ հոդվածը: ՓՀԷԿ-երն ունեն բացասական ազդեցություն գետային համակարգի հիդրոմորֆոլոգիայի եւ հիդրոկենսաբանության վրա⁹: Այս առումով «Արգիճի» ՓՀԷԿ-ի կառուցմամբ խախտվեց «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որում ասված է. «Անմիջական ազդեցության գոտին ընդգրկում է կենտրոնական գոտու սահմաններից դուրս գտնվող ջրհավաք ավազանը՝ մինչեւ ջրբաժան, որտեղ ցանկացած գործունեություն ուղղակի կամ անուղղակի ճանապարհով ազդում է Սեւանա լճի, նրա մեջ թափվող գետերի հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական, հիդրոկենսաբանական, սանիտարաթունաբանական, հիգիենիկ եւ այլ որակական ու քանակական ցուցանիշների վրա»¹⁰:

Արգիճի գետում են ձվադրում ՀՀ Կարմիր գրքում գրանցված ամառային արծաթափայլ իշխանը եւ այլ էնդեմիկ ձկնատեսակներ: Այսպիսով, «Արգիճի» ՓՀԷԿ-ը խախտեց երկու օրենքների դրույթներ

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի Բ կետ. «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը եւ դրանց ապրելավայրերի վատթարացմանը»:
- «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետ. «Կենտրոնական, անմիջական եւ ոչ անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է Սեւանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն»:
- «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված, որում ասված է, որ պետք է պահպանվի կենսաբազմազանության առաջնահերթությունը:

«Արգիճի» ՓՀԷԿ-ը կառուցվել է «Սեւան» ազգային պարկի ջրհավաք տարածքում: Այսպիսով, խախտվում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետը. «Ազգային պարկի տնտեսական գոտու տարածքում արգելվում է՝ ա) ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն. . . »:

«Արգիճի» ՓՀԷԿ-ի իրավախախտումների մասին «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն հայտնել է գերմանական KfW բանկին եւ պահանջել կանգնեցնել ՓՀԷԿ-ի ֆինանսավորումը: Ի պատասխան KfW-ն տեղեկացրել է. «Տեխնիկական խորհրդատուն եւս մեկ անգամ ուսումնասիրել է «Արգիճի» ՓՀԷԿ-ի փաստաթղթերը ն հաստատել բոլոր անհրաժեշտ թույլտվությունների վավերությունը՝ ներառյալ Ձեր կողմից նշված շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը»¹¹:

Նշենք, որ «Արգիճի» ՓՀԷԿ-ի դերիվացիոն խողովակաշարն ամենաերկարներից է Հայաստանում գործող ՓՀԷԿ-երի խողովակների մեջ: Ըստ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի արտադրող եւ կառուցվող ՓՀԷԿ-երի 2014թ. հունվարի 1-ի տեղեկանքի՝ «Արգիճի» ՓՀԷԿ-ի դերիվացիոն խողովակաշարի երկարությունը 9527 մետր է: Սա նշանակում է, որ ՓՀԷԿ-ի խողովակների մեջ է վերցվում գետի 18.68%-ը: Մոտ 10 կմ հասվածում ջրի բացակայությունը հանգեցնում է տեղի էկոհամակարգի, կենսաբազմազանության ոչնչացմանը, գետի ձկնաշխարհի վերացմանը, ինչի մասին վկայում են տեղաբնակները:

«Արգիճի» ՓՀԷԿ-ի ապօրինի կառուցումը հովանավորվեց նաեւ ՀՀ կառավարության կողմից: 2013թ. հոկտեմբերի 17-ի նիստում ՀՀ կառավարությունը որոշեց «Արգիճի» ՓՀԷԿ-ի կառուցման համար արտոնություններ տալ «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ին երեք տարով՝ մինչև 2016թ. հուլիսի 13-ը՝ երկարաձգելով ընկերության կողմից 300 միլիոն դրամը գերազանցող ապրանքների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը ՓՀԷԿ-ի համար խողովակներ ներմուծելու համար: Որոշման

⁹ «Սեյրան Մինասյան՝ փոքր ՀԷԿ-երի պատճառով փոխվում է գետային համակարգի հիդրոմորֆոլոգիան եւ հիդրոկենսաբանությունը», <http://ecolur.org/hy/news/water/hydromorphology-and-hydrobiology-or-river-ecosystems-changing-because-of-shpps-expert-syran-minasyan/5956/>

¹⁰ Տե՛ս «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենք:

¹¹ KfW գերմանական բանկի պատասխան նամակը, <http://ecolur.org/hy/news/water/german-kfw-development-bank-replied-on-argitchi-shpp-problem/5559/>

հիմնավորման մեջ ուշագրավ է հետևյալը. «Գեղարքունիքի մարզի Արզիճի գետի բնական ջրահոսքը օգտագործելով՝ կառուցվում է 11 ՄՎտ հզորությամբ «Արզիճի» ՓՇԷԿ-ը»¹²: Մինչդեռ Գերմանա-հայկական հիմնադրամի (GAF) պաշտոնական կայքում նախագծերին ներկայացվող ընդունելիության չափանիշների համաձայն՝ ՓՇԷԿ-ի դրվածքային հզորությունը պետք է լինի 10 ՄՎտ սահմանից ցածր:¹³ Նշենք, որ ՄՁՄ հաստատմանը ներկայացված «Արզիճի» ՓՇԷԿ-ի նախագծում ՓՇԷԿ-ի դրվածքային հզորությունը եղել է 8.56 ՄՎտ:¹⁴ Ստացվում է, որ վարկ ստանալուց հետո ՓՇԷԿ-ի դրվածքային հզորությունն ավելացրել են:

Ճգնաժամային վիճակում գտնվող գետեր

1. **Ամբերդ** գետի վրա (երկարությունը՝ 36 կմ) կառուցված են «Ամբերդ ՓՇԷԿ-1»-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2300 մ, «Ամբերդ ՓՇԷԿ-2» -ը, դերիվացիայի երկարությունը՝ 4218 մ եւ «Ամբերդ ՓՇԷԿ- 3»-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2835.1մ: «Ամբերդ 1», «Ամբերդ 2», «Ամբերդ 3» ՓՇԷԿ-երը կառուցվել են գերմանական KfW բանկի ֆինանսավորմամբ: Գետը ՓՇԷԿ-երի խողովակների մեջ է վերցված 9353.1 մետր գումարային տարածքում, ինչը կազմում է գետի 25.98%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ ՓՇԷԿ-երը ճգնաժամային վիճակ են ստեղծել գետի համար: «Ամբերդ 1, 2, 3» ՓՇԷԿ-երի նախագծերը հաստատվել են ՄՁՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Հատուկ դեպքի ուսումնասիրություն՝ Ամբերդ 1, 2, 3 ՓՇԷԿ-եր

«Ամբերդ ՓՇԷԿ-երի կառուցումը չի ազդի գետի ջրի որակի եւ մոտակա շրջաններում ապրող մարդկանց կյանքի որակի վրա: Ավելին, ծրագրի իրականացումը կունենա դրական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, քանի որ ՓՇԷԿ-երի կողմից արտադրած էլեկտրաէներգիան կնվազեցնի ՋԷԿ-երում արտադրած էլեկտրաէներգիան, ինչի հետևանքով կկրճատվեն ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ»,- նշված է Ամբերդ Կասկադ ՄՁՄ ծրագրում: Մինչդեռ այս ՓՇԷԿ-երի կառուցման արդյունքում «Արագածոտնի մարզի Ուջան, Կոշ, Ավան համայնքները խմելու եւ ոռոգման ջրի սուր պակաս են զգում: Վաստացել է գետի ջրի որակը եւ քանակը, եւ տարածաշրջանի հինգ համայնքներ կանգնած են ջրազրկման վտանգի առջև: Հայտնի է, որ վերը նշված տարածաշրջանների բնակիչների եկամտի հիմնական աղբյուրը հողագործությունն է ու անասնապահությունը: ՀԷԿ-երի անբարենպաստ ազդեցության հետևանքով ջրազրկված համայնքները հայտնվելու են կենսական նշանակություն ունեցող խնդրի առաջ, զրկվելու են հանապազօրյա հացից»¹⁵:

2. **Դարբ գետի վրա** (երկարությունը՝ 22 կմ) կառուցված է «Սարավան» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 3978,0, 433,2 մ, ինչը կազմում է գետի 20.05%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ գետը ճգնաժամային վիճակում է: «Սարավան» ՓՇԷԿ-ի նախագիծը հաստատվել է ՄՁՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

3. **Վարարակ գետի վրա** (երկարությունը՝ 29 կմ) կառուցված են՝ «Վարարակն» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2263մ, «Քարահունջ» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 1740,0 մ, 1224,0 մ, «Վ.Ա.Լ.» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 580,7 մ, ինչը կազմում է գետի

¹² ՀՀ կառավարության 2014թ. նիստի օրակարգ, կետ 3, <https://www.e-gov.am/sessions/archive/2013/10/17/>

¹³ Գերմանա-հայկական հիմնադրամի (GAF) պաշտոնական կայք, <http://gaf-re-shpp.am/index.php?id=9&L=1>

¹⁴ Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք, <http://www.nature-ic.am/hy/>

¹⁵ «Փոքր ՀԷԿ-երը վտանգում են համայնքային անվտանգությունը» հրապարակում, <http://www.hraparak.am/news/view/33203.html>

20.03%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ գետը ճգնաժամային վիճակում է:

4. Փամբակ գետի վրա (երկարությունը՝ 86 կմ) կառուցված են՝ «Արջուտ-2» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 1880 մ, «Սպիտակ ՀԷԿ-1» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2685 մ, «Վահագնի» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 16200 մ: Գետը խողովակի մեջ է վերցված 20765 մետր երկարությամբ գումարային տարածքում, որը կազմում է գետի 24.15%-ը: ԷկոԼուրի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ գետը ճգնաժամային վիճակում է:

«Սպիտակ ՀԷԿ-1» եւ «Վահագնի» ՓՇԷԿ-երը կառուցվել են EBRD-ի ֆինանսավորմամբ: Այս ՓՇԷԿ-երի նախագծերը հաստատվել են ՄՁՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

5. Գեղարոտ գետի վրա (երկարությունը՝ 25 կմ) կառուցված են՝ «Արագած-1» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2350 մ, «Գեղարոտ» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 4640 մ, որը կազմում է գետի 27.96%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ գետը ճգնաժամային վիճակում է:

2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված կառուցման լիցենզիաների համաձայն՝ Գեղարոտ գետի վրա լիցենզիա է տրված հետեւյալ ՓՇԷԿ-երի կառուցման համար՝ «Ալպիական 1» ՓՇԷԿ, դերիվացիայի երկարությունը՝ 3300 մ, «Լուսարփի» ՓՇԷԿ, դերիվացիայի երկարությունը՝ 1120 մ:

Այս ՓՇԷԿ-երի կառուցման դեպքում գետը խողովակի մեջ կվերցվի 11410 մ երկարությամբ գումարային տարածքում, որը կազմում է գետի 45.64%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա աղետ կլինի Գեղարոտ գետի համար:

Հատուկ դեպքի ուսումնասիրություն՝ «Գեղարոտ» ՓՇԷԿ

Միայն «Գեղարոտ» ՓՇԷԿ-ը խողովակի մեջ է վերցնում գետի 18.56%-ը: «Գեղարոտ» ՓՇԷԿ-ը կառուցված է գերմանական KfW բանկի միջոցներով եւ ընդգրկված է Գերմանա-հայկական հիմնադրամի (GAF) պաշտոնական կայքի «Հաջողված պատմություններ» էջում:

Նշենք, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների համաձայն՝ «Արագած» ՓՇԷԿ-ին լիցենզիա տրամադրվել է 2009թ-ին, իսկ «Գեղարոտ» ՓՇԷԿ-ին՝ 2010 թվականին, ինչը վկայում է այն մասին, որ Գեղարոտ գետը ճգնաժամային վիճակում է հայտնվել գերմանական բանկի ֆինանսավորմամբ համանուն ՓՇԷԿ-ի կառուցումից հետո:

6. Մեղրի գետի վրա (երկարությունը՝ 32 կմ) կառուցված են՝ «Մեղրի» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 135*2 մ (270 մ), «ՆՏԴԵՆ» ՓՇԷԿ-ը՝ դերիվացիայի երկարությունը՝ 2020 մ, «Կանթեղ» ՓՇԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 1090 և 3280 մ: Գետը խողովակի մեջ է վերցված 6660 մետր երկարությամբ գումարային տարածքում, որը կազմում է գետի 20.81%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ գետը ճգնաժամային վիճակում է:

Հատուկ դեպքի ուսումնասիրություն՝ Մեղրի գետ

2011թ. Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը լրատվամիջոցներին հայտնեց, որ Մեղրի գետի վրա նախատեսվում է 9 ՀԷԿ-երի կառուցում, որոնցից երկուսն արդեն ընթացքի մեջ են:¹⁶

¹⁶ «Մեղրի գետի վրա նախատեսվում է 9 ՀԷԿ-ի կառուցում, սահազանգում է բնապահպանը» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/sos/9-hpps-planned-to-be-constructed-on-meghri-river/3210/>

«Յուրաքանչյուր ՀԷԿ-ը գետի ջուրը վերցնելու է միջինը 4 կմ երկարությամբ տարածքում: Ըստ այդ ՀԷԿ-երի միջուկ ընկած տարածքի՝ Մեղրիի գետային ավազանը 38 կմ տարածքում կենթարկվի փոքր ՀԷԿ-երի ազդեցությանը: Այդպիսով «Արեւիկ» ազգային պարկի լանդշաֆտը, որի տարածքը մասնակիորեն մտնում է Մեղրի գետի ավազան, կխախտվի: Բայց դա դեռ վերջը չէ: «Մեղրիի տարածքում նախատեսված է կառուցել 9 փոքր ՀԷԿ-եր, որոնք իմ խորին համոզմամբ Մեղրիի համար կունենան ողբերգական նշանակություն: ...Նախ առաջինը, որ 38 կմ տարածքում ամեն մի ՀԷԿ-ից մյուս ՀԷԿ-ն ընկած տարածքում 3-4 կմ հեռավորությամբ ջուրն առնվելու է խողովակաշարի մեջ: Այդ ջրերը քանի գնում, նվազում են, եւ այն հաշվարկները, որոնք ներկայացված են, թե իբրեւ բավարարում են նման քանակի ՀԷԿ-եր աշխատացնելու համար, բացարձակապես իրականությանը չեն համապատասխանում: Եւ ես համոզված եմ, որ նման հաշվարկներով առաջնորդվելու դեպքում մեր տարածքներն ամբողջությամբ չորանալու են»,- Մեղրիի ակտիվիստ:¹⁷

Ակնհայտ է, որ Մեղրի գետի վրա եւս 9-ը փոքր ՀԷԿ-երի կառուցումը գետը ճգնաժամային վիճակից աղետայի վիճակի կհանգեցնի:

7. Վաղուտ գետի վրա (երկարությունը՝ 12 կմ) կառուցված են՝ «Բենգար Էներջի» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 640 մ, «Զոր-Զոր ՀԷԿ-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 1365 մ, «ԶՈՐ-ԶՈՐ-2» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 400, 350, 350 մ (1100 մ): Գետը խողովակի մեջ է վերցված 3105 մետր երկարությամբ գումարային տարածքում, որը կազմում է գետի 25.87%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ գետը ճգնաժամային վիճակում է:

8. Լորաձոր գետի վրա (երկարությունը՝ 23 կմ) կառուցված են՝ «Դարբաս ՓՀԷԿ-2» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2858 մ, «Հոկտեմբեր» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 520 մ, «Լոր ՀԷԿ-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2400 մ, «Լեռնաշեն-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2083 մ: Գետը խողովակի մեջ է վերցված 7861 մ երկարությամբ գումարային տարածքում, որը կազմում է գետի 34.17%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ Դարբաս գետը ճգնաժամային վիճակում է: «Դարբաս ՓՀԷԿ-2» ՓՀԷԿ-ը կառուցվել է KfW գերմանական բանկի տրամադրած միջոցներով:

9. Դարանակ գետակի վրա (երկարությունը՝ 6,5 կմ) «Ագրոսպասարկում ԱՄ-ի Վարդենիսի շրջանային միավորում» ԲԲԸ-ն կառուցում է «Դարանակ» ՓՀԷԿ-ը: «Դարանակ» ՓՀԷԿ-ի նախագծի համաձայն՝ ՓՀԷԿ-ի դերիվացիայի երկարությունը 1729.90 մ է, ինչը կազմում է գետի 26.61%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա ճգնաժամային վիճակ է ստեղծում գետի համար:

«Դարանակ» ՓՀԷԿ-ը ներկայացված է KfW բանկի ֆինանսավորմանը:

10. Գիծգետ գետակի վրա (երկարությունը՝ 8,5 կմ) կառուցվում է «Արևիս-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիոն խողովակաշարի երկարությունը, ՓՀԷԿ-ի նախագծի համաձայն, 2478 մ է, ինչը կազմում է գետակի 29.15%-ը: ԷկոԼուրի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ ՓՀԷԿ-ը ճգնաժամային վիճակ է ստեղծում գետի համար:

11. Այրի գետի վրա (երկարությունը՝ 24 կմ) կառուցված է «Այրի» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 4284 մ: Այրի գետի վրա է կառուցվում «Դաստակերտ» ՓՀԷԿ-ը: Նախագծի համաձայն՝ «Դաստակերտ» ՓՀԷԿ-ի դերիվացիոն խողովակաշարի երկարությունը 1920 մ է: Այրի գետը խողովակաշարի մեջ է վերցվում 6204 մետր գումարային տարածքում, ինչը կազմում է գետի 25.85%-ը:

«ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա ճգնաժամային վիճակ է ստեղծում գետի համար:

«Այրի» ՓՀԷԿ-ի նախագիծը հաստատվել է ՄԶՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից եւ կառուցվել է EBRD-ի ֆինանսավորմամբ:

¹⁷ «Մեղրիի վրա փոքր ՀԷԿ-երը կարող են հանգեցնել մեղունների եւ մրգատու այգիների ոչնչացմանը» հրապարակում, <http://www.ecolur.org/hy/news/sos/shps-on-meghri-river-may-lead-to-destruction-of-bees-and-orchards/4360/>

12. **Պաղջուր գետի վրա** (երկարությունը՝ 31 կմ) կառուցված է «Խաչաղբյուր ՀԷԿ-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2*1800 մ: Պաղջուր գետի վրա կառուցվում է «Խաչաղբյուր-2» ՓՀԷԿ-ը, ճնշումային խողովակաշարի երկարությունը 3400 մ է:

Պաղջուր գետը ՓՀԷԿ-երի խողովակների մեջ է վերցվում գումարային 7000 մ տարածքում, ինչը կազմում է գետի 22.58%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա ճգնաժամային վիճակ է ստեղծում գետի համար: «Խաչաղբյուր ՀԷԿ-1» ՓՀԷԿ-ի կառուցումը ֆինանսավորել է EBRD-ն:

13. **Կարակայա** գետը Եղեգիս գետի աջակողմյան վտակներից է: Եղեգիս գետի երկարությունը 47 կմ է: Կարակայայի վրա կառուցված են՝ «Կարակայա» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 1200 մ եւ 3127 մ, «ՍՄՆՌԱՅՁ» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2268 մ, «Վարդահովիտ» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 3570 մ: Գետը խողովակի մեջ է վերցված 10165 մետր երկարությամբ գումարային տարածքում: Եթե նույնիսկ Կարակայան ունենա նույն 47կմ երկարությունը, ինչ Եղեգիսը, ապա «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն, հայտնվում է ճգնաժամային վիճակում, քանի որ խողովակի մեջ է վերցվում գետի 21.62%-ը:

«Կարակայա» ՓՀԷԿ-ի կառուցումը ֆինանսավորել է KfW գերմանական բանկը: «Վարդահովիտ» ՓՀԷԿ-ը ներկայացված է եղել KfW գերմանական բանկին ֆինանսավորման համար:

14. **Գողթ գետի վրա** (երկարությունը՝ 16 կմ) կառուցված են՝ «Գողթ-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 3850 մ, «Գողթ-2» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2050 մ: Գետը ՓՀԷԿ-երի խողովակների մեջ է վերցված 5900 մետր գումարային տարածքում, ինչը կազմում է գետի 36.87%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ գետը ճգնաժամային վիճակում է: «Գողթ 1» և «Գողթ 2» ՓՀԷԿ-երը կառուցվել են EBRD-ի ֆինանսավորմամբ:

15. **Գետիկ գետի վրա** (երկարությունը 48 կմ) կառուցված են՝ «Էրիկ» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 200 մ եւ 1850 մ (2050մ), «Գետիկ-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը 6200 մ, «Գետիկ 4» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 5200 մ: Գետը խողովակի մեջ է վերցվել 13450 մ երկարությամբ գումարային տարածքում, որը կազմում է գետի 28.02%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ Գետիկ գետը ճգնաժամային վիճակում է:

«Գետիկ 4» ՓՀԷԿ-ի կառուցումը ֆինանսավորել է KfW գերմանական բանկը: «Էրիկ» ՓՀԷԿ-ի նախագիծը հաստատվել է ՄԶՄ լիազորված ազգային մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

16. **Մարց գետի վրա** (երկարությունը՝ 27 կմ) կառուցված է «Մարցիգետ ՓՀԷԿ-2» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2818,0 մ եւ 2962,0 մ, ինչը կազմում է գետի 20%-ը: «Մարց Էներջի» ՍՊԸ-ն պատրաստվում է կառուցել «Մարցիգետ-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 4750 մ: Եթե ՓՀԷԿ-ը կառուցվի, ապա Մարց գետը խողովակի մեջ կվերցվի գումարային 10530 մ երկարությամբ տարածքում, ինչը կազմում է գետի 36.31%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա կնշանակի ճգնաժամային վիճակ գետի համար:



Աղետալի վիճակում է 3 գետ

1. **Կիստում գետի վրա** (երկարությունը՝ 13 կմ) կառուցված են «Հաղպատ-1» եւ «Հաղպատ-2» ՓՀԷԿ-երը: «Հաղպատ-1»-ի դերիվացիայի երկարությունը 300+280, 1350 մ է, «Հաղպատ-2»-ինը՝ 4535 մ: Կիստում գետը ՓՀԷԿ-երի խողովակների մեջ է վերցված 6465 մետր գումարային տարածքում, ինչը կազմում է գետի 49.73%-ը: «ԷկոԼուր»ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ Կիստում գետը աղետալի վիճակում է:

2. **Այսաս վրա** (երկարությունը՝ 12 կմ) կառուցված է «Հերմոն» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 3270 մ: Գետը խողովակի մեջ է վերցված 3270 մետր երկարությամբ տարածքում, որը կազմում է գետի 27.25%-ը:

Այսասի վրա «Արատեւէներջի» ՍՊԸ-ն կառուցում է «Նանե» ՓՀԷԿ-ը, որի դերիվացիայի երկարությունը 2726 մ է՝ ըստ «Նանե» ՓՀԷԿ-ի նախագծի: Այսպիսով, Այսասը խողովակի մեջ է վերցվում 5996 մ գումարային տարածքում, որը կազմում է գետի 49.96%-ը, ինչը աղետ է գետի համար: «Նանե» ՓՀԷԿ-ը ներկայացված է KfW բանկին ֆինանսավորման համար:

3. **Եղեգիս (Էլեգիս) գետի վրա** (երկարությունը՝ 47 կմ) կառուցված են հետեւյալ փոքր ՀԷԿ-երը՝ «Եղեգիս» ՓՀԷԿ՝ դերիվացիայի երկարությունը բացակայում է, «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՓՀԷԿ՝ դերիվացիայի երկարությունը՝ 1536 մ, «Եղեգնաձոր» ՓՀԷԿ՝ դերիվացիայի երկարությունը՝ 3250մ, 54 մ, «Եղեգնաձոր ՓՀԷԿ-1», դերիվացիայի երկարությունը՝ 2650 մ, «Եղեգիս-3» ՓՀԷԿ, դերիվացիայի երկարությունը՝ 1394 մ, «Եղեգիս-2» ՓՀԷԿ, դերիվացիայի երկարությունը՝ 2050 մ, «Եղեգիս-1» ՓՀԷԿ՝ դերիվացիայի երկարությունը՝ 4000 մ, «Գողթանիկ» ՓՀԷԿ՝ դերիվացիայի երկարությունը՝ 1760 մետր:

2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների թվում են Եղեգիս գետի վրա կառուցվող «Տիգրան Մեծ» ՓՀԷԿ-ը, դերիվացիոն խողովակաշարի երկարությունը՝ 2*2950 մ, «Ալնարս» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 2300 մ:

Այսպիսով՝ Եղեգիս գետը խողովակի մեջ է վերցվում 24894 մետր երկարությամբ գումարային տարածքում՝ չհաշված «Եղեգիս» ՓՀԷԿ-ը, որի դերիվացիայի երկարությունը բացակայում է: Այս ցուցանիշը կազմում է գետի 52.96%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ սա աղետ է Եղեգիս գետի համար:

«ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի կենտրոն»-ի տվյալների համաձայն՝ 2009թ-ից մինչև 2011թ-ը Եղեգիս գետում ջրի ջերմաստիճանը բարձրացել է 1 աստիճանով: Թափանցելիությունը նվազել է 3 միավորով (սմ), թթվածնի պարունակությունը՝ 2 միավոր (մգ/լ): Դա անդրադարձել է ձկնապաշարների վրա: Գետի ստորին հատվածներում կարմարխայտ էնդեմիկ ձկնատեսակն արդեն անհետացել է: Նման ճնշում գետի վրա գործադրում են փոքր ՀԷԿ-երը»¹⁸:

«Սուրբ Աղբյուր» ՓՀԷԿ-ը կառուցվել է կառուցվել է EBRD-ի ֆինանսավորմամբ: «Եղեգ» ՓՀԷԿ-ը կառուցվել է KfW-ի միջոցներով:

«Եղեգիս 2», «Եղեգիս 3», «Եղեգնաձոր 1», «Ալնարս» ՓՀԷԿ-երը ներկայացվել են KfW բանկին ֆինանսավորման համար:



¹⁸ «Երեք տարվա ընթացքում Եղեգիս գետը փոխել է իր կազմը» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/sos/yeghegis-river-changes-its-composition-for-three-years/4701/>

Կանխատեսումներ

2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ցուցակում նշված է, որ **Կաճաճկուտ** գետի (երկարությունը 11 կմ) վրա «ՄԵԴՎԻ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն ստացել է «Սեդվի-1» (դերիվացիայի երկարությունը՝ 970 մ), «Սեդվի-2» (դերիվացիայի երկարությունը՝ 2515 մ) ՓՀԷԿ-երի կառուցման լիցենզիա: 2 ՓՀԷԿ-երի համար լիցենզիայի ժամկետն ավարտվում է 6/15/2014թ: Նույն գետի վրա «ՎԱՆ ԱԼ ԷՆ Կ» ՍՊԸ-ն ստացել է «Կաճաճկուտ» ՓՀԷԿ-ի կառուցման լիցենզիան (դերիվացիայի երկարությունը՝ 2710 մետր): Այս ՓՀԷԿ-երի կառուցման դեպքում Կաճաճկուտը խողովակի մեջ կվերցվի 6195 մետր գումարային տարածքում, ինչը կազմում է գետի 56.31%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա աղետ կլինի գետի համար:

«Սեդվի 1», «Սեդվի 2» ՓՀԷԿ-երը ներկայացված են են եղել ՄԶՄ լիազորված ազգային մարմնի հաստատմանը: Միայն «Սեդվի-1» «Սեդվի-2» ՓՀԷԿ-երը գետը կվերցնեն խողովակի մեջ 3485 մետր գումարային տարածքում, որը կկազմի Կաճաճկուտ գետի 31.68%-ը: ԷկոԼուրի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ միայն «Սեդվի-1» «Սեդվի-2» ՓՀԷԿ-երի պատճառով գետը ճգնաժամային վիճակում կհայտնվի: Այս դեպքում, թե որքանով է նպատակահարմար կլինի փոփոխության երեւոյթների մեղմելուն ուղղված ՓՀԷԿ-երի կառուցումը, պարզ չէ, քանի որ կիրմետրերով ջրի բացակայությունը ոչ մի դրական բանի չի հանգեցնի:

«Սեդվի 1», «Սեդվի 2», «Կաճաճկուտ» ՓՀԷԿ-երի նախագծերը ներկայացված են KfW բանկին ֆինանսավորման համար:

2. **Չքնաղ** գետի վրա (երկարությունը՝ 28 կմ) 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված կառուցման լիցենզիաների համաձայն՝ տրված են հետևյալ ՓՀԷԿ-երի կառուցման լիցենզիաները՝ «Ստեփանավան-2» ՓՀԷԿ, դերիվացիայի երկարությունը՝ 1700 մ, «Սահակյան ՓՀԷԿ-1», դերիվացիայի երկարությունը՝ 1210մ, «Սահակյան ՓՀԷԿ-2», դերիվացիայի երկարությունը՝ 5560 մ: ՓՀԷԿ-երի կառուցման արդյունքում գետը խողովակի մեջ կվերցվի 8470 մ գումարային տարածքում, ինչը կազմում է գետի 30.25%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա ճգնաժամային վիճակ կստեղծի գետի համար:

3. **Դալի** գետի վրա (երկարությունը՝ 26 կմ) կառուցված է «Միսական-1» ՓՀԷԿ-ը, շահագործող՝ «Լորագետ ՀԷԿ» ՍՊԸ, դերիվացիայի երկարությունը՝ 2196 մետր: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված կառուցման լիցենզիաների համաձայն՝ Դալի գետի վրա տրված է «Դալի» ՓՀԷԿ-ի կառուցման լիցենզիան, դերիվացիայի երկարությունը՝ 6074 մետր: Այս ՓՀԷԿ-ի կառուցմամբ Դալի գետը ՓՀԷԿ-երի խողովակների մեջ կվերցվի 8270 մետր գումարային տարածքում, ինչը կազմում է Դալի գետի 31.80%-ը: «ԷկոԼուր»-ի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ դա ճգնաժամային վիճակ կստեղծի գետի համար:

4. **Գեղի** գետի վրա (երկարությունը՝ 30 կմ) 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված կառուցման լիցենզիաների համաձայն՝ տրված են լիցենզիաներ հետևյալ ՓՀԷԿ-երի կառուցման համար՝ «Գեղի-1» ՓՀԷԿ-ը, դերիվացիայի երկարությունը՝ 6500 մ, «Գեղի-2» ՓՀԷԿ, դերիվացիայի երկարությունը՝ 2640 մ: Այսպիսով, Գեղի գետը ՓՀԷԿ-երի խողովակների մեջ կվերցվի 9140 մետր գումարային տարածքում, ինչը կազմում է գետի 30.46%-ը: ԷկոԼուրի «Էկոլոգիական ռիսկերի գնահատման մոդել»-ի համաձայն՝ ՓՀԷԿ-երի պատճառով Գեղի գետը ճգնաժամային վիճակում կհայտնվի:

ՓՀԷԿ-ԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Էկոլոգիական թողք

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 927-Ն որոշմամբ ամրագրվեց, որ, բնապահպանական թողքի արժեքը որոշելիս, որպես հիմք ընդունվում է տարվա սեզոնային ժամանակաշրջանում առավել նվազագույն էլքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին

ելքը:¹⁹ Սա նշանակում է, որ եթե գետը չորացել է և 10 օրվա ընթացքում նրանում արձանագրվել է զրոյական ջրհոսք, ապա դա կարելի է ընդունել որպես էկոլոգիական թողք: Մինչդեռ ՀՀ ջրային օրենսգրքի սահմանման համաձայն՝ էկոլոգիական թողքը ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը եւ ինքնավերականգնումը: Օրինակ՝ էկոլոգիական թողքը «Իջևան-1» ՓՇԷԿ-ի գլխային հանգույցի ուղղահատածքում կազմելու է 0.75 մ³/վրկ²⁰, «Արփա-3» ՓՇԷԿ-ի էկոլոգիական թողքը՝ 0.64 մ³/վրկ²¹, «Խաչաղբյուր 2» ՓՇԷԿ-ինը՝ 0.08 մ³/վրկ²², «Կոշ» ՓՇԷԿ-ինը՝ 0.37 մ³/վրկ²³, «Գնդեվանք» ՓՇԷԿ-ինը՝ 0.05 մ³/վրկ²⁴: Ուսումնասիրված ՓՇԷԿ-երի նախագծերի մեջ ամենից քիչ էկոլոգիական թողք կլինի «Դարանակ» ՓՇԷԿ-ի կառուցման դեպքում. «Դարանակ և ձախակողմյա գետերի էկոլոգիական հավասարակշռության համար անհրաժեշտ սանիտարական ելքերն են, համապատասխանաբար, 0.008մ³/վրկ և 0.004մ³/վրկ չափով»²⁵:

Նման պարագայում, երբ կառավարության որոշման հիման վրա գետերի 90 տոկոսից ավելին վերցվում է խողովակների մեջ, ապա ջրային ռեսուրսը հյուծվում է, ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը չի պահպանվում, վերանում է տեղի կենսաբազմազանությունը: Գետի ջրային ռեժիմը խախտվում է նույնիսկ այն դեպքում, երբ նախագծով նախատեսված էկոլոգիական թողքը բավարար է, քանի որ ՓՇԷԿ-ի շահագործման ընթացքում նախագծային պայմանները չեն պահպանվում: Այսպիսով, չեն կատարվում է ՀՀ ջրային օրենսգրքի պահանջները:

ՀՀ ջրային օրենսգրքի 98 հոդվածը եւ 99 հոդվածի 5-րդ կետը պահանջում են, որ ջրային ռեսուրսի օգտագործման դեպքում էկոհամակարգերը եւ լանդշաֆտները պահպանվեն, եւ ապահովվի էկոհամակարգի հավասարակշռությունը²⁶: Իսկ 99-ը հոդվածի 6-րդ կետը պահանջում է պահպանել ջրային ռեսուրսը հյուծումից: ՀՀ ջրային օրենսգրքը ջրային ռեսուրսի հյուծումը սահմանում է այսպես. «ջրի ծավալի կամ հոսքի այնպիսի կրճատում եւ (կամ) որակի փոփոխություն, որի դեպքում առաջանում է ջրային ռեսուրսի հավասարակշռված էկոլոգիական վիճակի խախտում»²⁷:

Հատուկ դեպքերի ուսումնասիրություն

2013թ-ին ՀՀ բնապահպանության նախարարությունը բացահայտեց. «Լոռու մարզում գտնվող «Տիրակալ» ՄՊԸ-ին պատկանող «Կուրթան» փոքր հիդրոէլեկտրակայանի ջրընդունիչ կայանից ջրի էկոլոգիական թողքը սահմանված նորմերից անհամեմատ ցածր է եղել: Իսկ Գեղարքունիքի մարզի «Գրիար» ՓՇԷԿ-ի ջրընդունիչ կայանի ուսումնասիրություններից պարզվել է, որ Գետիկ գետի վրա կառուցված կայանում էկոլոգիական թողքը գրեթե հասցված է 0-ի, ինչը բնապահպանական օրենսդրության և նորմատիվների կոպիտ խախտում է: Նույնանման ուսումնասիրություն է իրականացվել նաև Գեղարքունիքի մարզի «Էրիկ» ՓՇԷԿ-ում»²⁸:

«Ջերմուկ ՀԷԿ-2» փոքր ՀԷԿ-ը շահագործող «Ջերմուկի հիդրոտեխ» ՄՊ ընկերությունը չի ապահովում ձկնուղու համար պահանջված ջրի հոսքը: Ընկերությունը ոչ միայն հաշվի չի առնում սահմանված կարգն ու նորմերը, այլև միտումնավոր փակում է ձկնուղի տանող ջրի ճանապարհը:

¹⁹ http://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/06/11_0927.pdf

²⁰ «Իջևան-1» ՓՇԷԿ-ի նախագիծ

²¹ «Արփա 3» ՓՇԷԿ-ի նախագիծ

²² «Խաչաղբյուր 2» ՓՇԷԿ-ի 2014թ-ի նախագիծ

²³ «Կոշ» ՓՇԷԿ-ի նախագիծ

²⁴ «Գնդեվանք» ՓՇԷԿ-ի նախագիծ

²⁵ «Դարանակ» ՓՇԷԿ-ի նախագիծ

²⁶ ՀՀ ջրային օրենսգրքը

²⁷ ՀՀ ջրային օրենսգրքը

²⁸ ՀՀ բնապահպանության պաշտոնական կայք, <http://www.mnp.am/?aid=2117>

Տարածքը ամբողջովին ցամաք է, իսկ ձկների մասին խոսելն արդեն ավելորդ է»²⁹



2012թ. «Թռչկան» քաղաքացիական նախաձեռնությունը ահագանգեց, որ Արփա գետի Հեր-Հեր վտակի կառուցված երկու փոքր ՀԷԿ-երի շահագործման հետեւանքով գետի հունը և ջրվեժներից մեկն ամբողջովին չորացել են, իսկ երկրորդ ջրվեժից շատ փոքր քանակությամբ ջուր է թափվում:³⁰

Անտառահատումներ

Փոքր ՀԷԿ-երը հաճախ կառուցվում են անտառային տարածքներում: Հայաստանի անտառները պաշտպանվում են ՀՀ անտառային օրենսգրքով: Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման եւ անտառօգտագործման հետ չկապված շինարարական ու պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի եւ այլ կոմունիկացիաների անցկացման, հորատման եւ այլ աշխատանքներն իրականացվում են պետական կառավարման լիազորված մարմնի տված համաձայնության հիման վրա: Համաձայնությունը տրվում է բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:

Հատուկ դեպքերի ուսումնասիրություն

«Ջերմուկ 1» ՓՀԷԿ-ի շինարարությունը սկսվեց բնապահպանական փորձաքննության եզրակացություն տրամադրելուց դեռ ամիսներ առաջ: ՓՀԷԿ-ի հասարակական լսումների ժամանակ պարզվեց, որ «Ջերմուկ Տուրքոշին» ՄՊԸ-ի կողմից կառուցվող «Ջերմուկ-1» ՓՀԷԿ-ը սնող ջրագծի խողովակաշարը ներկայացված նախագծով անցնում է «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ջերմուկի անտառտնտեսության թիվ 11-րդ քառակուսու տարածքով, ինչի մասին «Հայանտառ» ՊՈԱԿ-ը տեղեկացված չի եղել եւ համապատասխան թույլտվություն չի սովել: Չնայած սրան՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը հետին ամսաթվով դրական եզրակացություն տվեց ՓՀԷԿ-ի նախագծին, որի իրականացման ընթացքում հատվելու է 200-500 ծառ: Նշենք, որ Անտառային օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ կետով անտառային պետական ծառայության պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասության սահմաններում կանխել անտառային օրենսդրության խախտումները: Այս դեպքում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ը ոչինչ չձեռնարկեց:

²⁹ «Չուկը պետք է թռչի քարերի վրայով, քայլելով բարձրանա վերեւ, որպեսզի ձվադրի (Լուսանկարներ)» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/water/fish-should-first-jump-over-stones-then-walk-upwards-to-get-to-spawning-site/5551/>

³⁰ «Փոքր ՀԷԿ-ի պատճառով ջրվեժը չորացել է», հրապարակում, <http://ecolur.org/hy/news/water/waterfall-dried-out-because-of-small-hpp/4017/>

Ջերմուկի անտառտնտեսության տարածքում «Արփա 3» ՓՇԷԿ-ի կառուցման նախագծով նախատեսված է 442 ծառի եւ թփի հաստում: Ծառերը հատվելու են 2650մ երկարությամբ և 1220մ տրամագծով ճնշումային խողովակաշարի անցկացման համար³¹: ՓՇԷԿ-ի նախագծում նշված չէ, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը թույլատրել է ծառահատումները: «Արփա 3» ՓՇԷԿ-ի հասարակական լսումների ժամանակ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ ներկա չէր:

«Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-ի շինարարության ժամանակ տասնյակ ծառեր հատվեցին դեռ 2012թ-ին, երբ ՓՇԷԿ-ի վերջնական նախագիծը հաստատված չէր: 2014թ. «Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-ի կառուցման նախագիծը կրկին բնապահպանական փորձաքննություն է անցնում, սակայն բնությանն արդեն իսկ պատճառվել է զգալի վնաս: «2,8 կմ երկարությամբ խողովակաշարն անցկացնելու ընթացքում անխուսափելի են խոշորամասշտաբ ծառահատումները, որոնց արդեն բնապահպաններն ականատես են եղել» – նշված է ՀՀ բնապահպանության նախարարությանն ուղղված «Թռչկան» քաղաքացիական նախաձեռնության հայտարարության մեջ³²: 2014թ. «Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-ի կառուցման նախագծում նշված է. «ՓՇԷԿ-ի կառուցման ընթացքում կհատվեն տեղանքին բնորոշ 191 ծառ և մանր թուփ»³³: Այս դեպքում եւս «Հայանտառ»-ի թույլտվության մասին նախագծում նշված չէ:



Սողանք

Փոքր ՀԷԿ-երի կառուցումն իրականացվում է՝ առանց հաշվի առնելու սողանքային գործընթացները և հողի փխրունությունը: Ինտենսիվ շինարարական աշխատանքներից, պայթյուններից, խողովակների և ճանապարհների անցկացումից հետո սողանքային գործընթացներն ակտիվանում են:

Հատուկ դեպքերի ուսումնասիրություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2013թ. հուլիսի 29-ին խողովակների անցկացման հետևանքով հողը մոտ 200 մետր սողացել և լցվել է Եղեգիս գետը:

³¹ «Արփա 3» ՓՇԷԿ-ի նախագիծ,

³² «Բնապահպանական տեսչությունը չի նկատել, որ «Խաչաղբյուր 2» փոքր ՀԷԿ-ը կառուցվում է հատուկ պահպանվող տարածքում» <http://ecolor.org/hy/news/water/environmental-expertise-didnt-notice-that-vkhachaghbyur2v-shp-being-constructed-on-specially-protected-area/4240/>

³³ «Խաչաղբյուր 2» ՓՇԷԿ-ի 2014թ-ի նախագիծ

Պարզվել է, որ Շատին գյուղի 6-րդ փողոց փակուղի 3 թիվ 3 տանը կից հողամասից սահքի մակերեսը կազմել է 400մ3 (8x15), ինչի հետևանքով 4 ընկուզենիներ հայտնվել են Եղեգիս գետում³⁴:



«Խաչաղբյուր 2» ՓՇԷԿ-ը կառուցվում է սողանքային գոտում, ինչի հետևանքով ՓՇԷԿ-ի շինարարական դժբախտ պատահար տեղի ունեցավ մարդկային կորստով: «Ամբողջ Աղստևի հովիտը մենք ուսումնասիրել ենք: Այնտեղ առկա են սողանքների առաջացման բոլոր պայմանները՝ լանջերի թեքություն, ճեղքվածքային գոտիներ, տեղումներ և այլն, սրանք բոլորն էլ սողանքի բուն են... Այդ ՇԷԿ-ի թույլտվությունը ո՞վ է տվել: Ո՞վ է տվել երկրաբանական հետազոտության եզրակացություն: Եթե դրանք չկան, կառուցողն էլ պետք է պատասխանատվության ենթարկվի: Բնչպե՞ս կարող են առանց առաջն առնելու, մարդկային զոհաբերությունների գնան», – ասել է հիդրոերկրաբան Ռուբեն Յաղոյանը³⁵:

Կենսաբազմազանության կորուստ

ՓՇԷԿ-երի կառուցման ընթացքում տուժում է տեղի կենսաբազմազանությունը: Վտանգվում են Կարմիր գրքում գրանցված բուսական եւ կենդանական տեսակները: Շահագործման ընթացքում, երբ չի ապահովվում նորմալ էկոլոգիական թողք, վերանում են ձկները: Օրինակ՝ Սեւանա լիճ թափվող գետերի վրա կառուցված ՓՇԷԿ-երի պատճառով իշխանը չի կարողանում բարձրանալ գետի ակունք ձվադրման:

Հատուկ դեպքի ուսումնասիրություն

«Արփա-3» ՓՇԷԿ-ի կառուցման նախագծում նշված է. «Շինարարության համար նախատեսված տարածքում հանդիպում է ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակ՝ Կովկասյան ջրասսամույր (*Lutra lutra L.*)»: «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված Բ կետով արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը եւ դրանց ապրելավայրերի վատթարացմանը: Մինչդեռ «Արփա-3» ՓՇԷԿ-ի կառուցման նախագիծն ասում է. «Շինարարական աշխատանքներ կատարելիս՝ կարող են վտանգվել ցամաքային կենդանիների բնադրման և ձվադրման վայրերը, խախտվել կենդանիների միգրացիոն և ջուր խմելու ուղիները: Ծանր մեխանիզմների աշխատանքների

³⁴ «Խողովակները՝ սահքի պատճառ» հրապարակում, <http://mes.am/am/news/accidents/35-2012-02-20-09-58-42/2303-2013-07-29-17-06-09>

³⁵ «Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-ը սողանքային գոտում է կառուցվում» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/sos/vkhachaghbyur2v-shhp-being-constructed-in-landslip-zone/4933/>

ընթացքում առաջացած աղմուկն ի հայտ կրերի վախի գործոն, ինչը կենդանիներին կստիպի փոխել իրենց բնակության վայրը»:

ՓՀԷԿ-երի շահագործման արդյունքում վերանում են մեղուները: Այս ահազանգը հնչեցրեցին Մեղրիի բնակիչները, որտեղ Մեղրի գետի վրա նախատեսվում է 9 ՓՀԷԿ-ի կառուցում: «Որտեղ բարձրավոյտ հոսանքներ են գնում, այնտեղ մեղուն աշխատել չի կարող, եւ մեղվաբուծությունը զարգանալ չի կարող: Իսկ Մեղրին հայտնի է իր դեղին մեղունով, որը փոշոտում է մեր բուսականությունը եւ բերքի առատության երաշխիք է հանդիսանում: Չկա փոշոտում, չկա բերք, չկա բուսականություն...»³⁶:

ՓՀԷԿ-երի նախագծերը կազմելիս՝ չի ուսումնասիրվում տեղանքի կենսաբազմազանությունը: Օրինակ՝ «Կարա-Կայա» ՓՀԷԿ-ի վերազինման նախագծում ՓՀԷԿ-ի տարածքի բուսական եւ կենդանական աշխարհը նկարագրված չէ: Իսկ «Գնդեվանք» ՓՀԷԿ-ի կառուցման նախագծում օգտվել են միայն գրական աղբյուրներից: Շատ են նախագծերը, որոնցում օգտվել են 1987 եւ 1989 թվականներին հրատարակված Կենդանիների եւ Բույսերի Կարմիր գրքերից, մինչդեռ 2010 թվականին լույս տեսան անհետացող տեսակներով ավելի հարստացած բույսերի եւ կենդանիների Կարմիր գրքեր: Մեր ուսումնասիրած նախագծերից «Կարա-Կայա» ՓՀԷԿ-ի, «Գնդեվանք» ՓՀԷԿ-ի, «Ստեփանավան-2» ՓՀԷԿ-ի, «Տավուշ» ՓՀԷԿ-ի նախագծերում գրականության ցանկում նշված են 1987 եւ 1989 թվականներին հրատարակված Կենդանիների եւ բույսերի Կարմիր գրքերը:

ՓՀԷԿ-երը կառուցվում են հատուկ պահպանվող տարածքներում, ինչը հակասում է ՀՀ բնապահպանական օրենսդրությանը:

Հատուկ դեպքերի ուսումնասիրություն

«Ջինջ Արփա» ընկերության ներկայացրած «Արփա-3» ՓՀԷԿ-ի 1-ին նախագծում նշված էր. «Նախագծվող ՓՀԷԿ-ի տարածաշրջանն ընդգրկված է «Ջերմուկ» ջրաբանական արգելավայրի տարածքում, որը ստեղծվել հանքային աղբյուրների պահպանման համար»: Երբ հասարակայնությունն իր դժգոհությունն ու բողոքը հայտնեց այս կապակցությամբ, «Ջինջ Արփա»-ն փորձաքննության ներկայացրեց նոր նախագիծ, որում նշված է, որ ՓՀԷԿ-ը արգելավայրի տարածքից դուրս է: Մինչդեռ Համահայկական բնապահպանական ճակատ բնապահպանական նախաձեռնությունը պնդում է հակառակը. «Մենք ուսումնասիրեցինք արգելավայրի տեղադիրքը, կանոնադրությունն ու սահմանների նկարագիրը և համեմատեցինք դրանք նախատեսվող ՓՀԷԿ-ի կառույցների տեղադիրքի հետ: Պարզվում է, որ «Ջերմուկ» ջրաբանական պետական արգելավայրը գտնվում է ծովի մակարդակից 2100-2470 մ բարձրության վրա՝ Արփա գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի տարածքի սահմաններում, ակունքից մինչև եզրափակման կետը, «Ջերմուկ» առողջարանի հիդրոլոգիական կետը: Իսկ արգելավայրի կանոնադրության 6-րդ կետում հստակ գրված է, որ այդ տարածքում արգելվում է նոր հիդրոէլեկտրակայանների կառուցումն ու գետերից ջրառը: Քանի որ «Արփա-3» ՓՀԷԿ-ը նախատեսվում է կառուցել Արփա գետի վրա՝ ծովի մակարդակից 2146-2287 մ բարձրության վրա, պարզ է, որ այն ուղղակի չի կարող արգելավայրի տարածքից դուրս գտնվել»³⁷:

«Իջնանի» պետական արգելավայրի տարածքում կառուցվում է «Խաչաղբյուր-2» ՓՀԷԿ-ը: Համահայկական բնապահպանական ճակատը ՀՀ բնապահպանության նախարարությանն ուղղված նամակում գրում է. «...բնապահպանության նախարարության Կենսատեսուրսների կառավարման գործակալության՝ դեռևս 25.12.2012թ. գրությամբ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար է. Փիրումյանը տեղեկացվել է, որ

³⁶ «Մեղրիի վրա փոքր ՀԷԿ-երը կարող են հանգեցնել մեղունների եւ մրգատու այգիների ոչնչացմանը» հրապարակում, <http://www.ecolur.org/hy/news/sos/shps-on-meghri-river-may-lead-to-destruction-of-bees-and-orchards/4360/>

³⁷ «ՀԲԸ՝ «Արփա-3» և «Խաչաղբյուր-2» ՓՀԷԿ-երի նախագծերին պետք է տալ բացասական եզրակացություն», <http://ecolur.org/hy/news/water/pef-quotarpa3quot-and-quotkhachaghbyurquot-shpp-projects-to-be-issued-negative-conclusions/5935/>

«Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-ի գլխամասային հանգույցի և շենքի կառուցման կոորդինատային տվյալների համադրումից պարզվել է, որ այն գտնվում է «Իջևանի» պետական արգելավայրի սահմաններում, ուստի անհրաժեշտ է առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածների պահանջներով: Հաշվի առնելով այդ ամենը՝ գործակալության պետ Ա. Զիրոյանը գտել է, որ «Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-ի նախագիծը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին»³⁸:

2009թ. ստեղծված Արփի լիճ» ազգային պարկի կազմում ընդգրկված Արփի լիճը փոքր ՀԷԿ-երի պատճառով դատարկվում է: Այս մասին ահազանգ է հնչեցրել Գյումրիի Օրհուս կենտրոնի համակարգող Գեորգ Պետրոսյանը. «Մենք ամառային ամիսներին տեսանք, թե ինչպես լիճը գրեթե ամբողջությամբ դատարկվեց, որովհետև Ախուրյան գետի վրա ՀԷԿ-եր են սարքվել»: Նրա խոսքերով՝ Արփի լճից ռոտզման պատրվակով բաց թողնվող ջուրը հիմնականում ուղղվում է փոքր ՀԷԿ-երի աշխատեցմանը: «Ջուրն այն ժամանակահատվածներում են բաց թողել, երբ գյուղատնտեսական ոչ մի լուրջ խնդիր չկար: Աշնանն է բաց թողնվել՝ իբր թե աշնանացանը ջրելու համար: Բայց դա ծիծաղելի է. սեպտեմբերի վերջից սկսած մեզ մոտ կայուն անձրևներ են: Այնպես որ խնդիր չկար ջրի բացթողումների, որպեսզի ռոտզման նպատակով օգտագործեին: Այսինքն, այն ինչը -որ վաղուց Սեւանում էր կատարվում, հիմա Արփի լճում է կատարվում», - ասաց Գեորգ Պետրոսյանը.³⁹

Այսպիսով, «Արփա-3» եւ «Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-երի նախագծերը հակասում են «Բնության պահպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածին. «Հայաստանի Հանրապետությունում պետական արգելավայրի տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է հատուկ պահպանության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական եւ կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը»: Խախտվում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, որով արգելվում է ազգային պարկի տարածքում ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն:

Զբոսաշրջային վայրերի կորուստ

ՓՇԷԿ-երի շինարարության համար կառավարությունը փոխում է այն տարածքների հողերի կատեգորիան, որոնք հանգստի գոտի եւ զբոսաշրջության վայր են համարվել: Չորագետի վտակ Չքնաղի վրա «Ստեփանան-2» ՓՇԷԿ-ի կառուցման թույլտվությունը տրվել է մի վայրում, որը ստեփանավանդիները համարում են զբոսաշրջային գոտի, ինչի մասին բարձրաձայնեցին ՓՇԷԿ-ի հասարակական լուսմների ժամանակ⁴⁰: Սակայն ՓՇԷԿ-ը կառուցողը մատնացույց արեց ՀՀ կառավարության 2005թ-ի սեպտեմբերի 1-ի թիվ 1523-Ն որոշումը, որով 19.6 հեկտար հողեր փոխադրվել են էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ հիդրոէլեկտրակայանի և օժանդակ կառույցների շինարարության համար:⁴¹

Չքնաղի վրա կառուցման լիցենզիաներ ունեն նաեւ «Սահակյան ՓՇԷԿ-1», «Սահակյան ՓՇԷԿ-2», ՓՇԷԿ-երի նախագծերը: ՀՀ Լոռու մարզի պաշտոնական կայքի համաձայն՝ 2014թ-ին

³⁸ «ՀԲԸ՝ «Արփա-3» և «Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-երի նախագծերին պետք է տալ բացասական եզրակացություն», <http://ecolur.org/hy/news/water/pef-quotarpa3quot-and-quotkhachaghbyurquot-shpp-projects-to-be-issued-negative-conclusions/5935/>

³⁹ «Արփի լիճը փոքր ՀԷԿ-երի պատճառով դատարկվում է» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/water/lake-arpi-getting-empty-because-of-shpps/5238/>

⁴⁰ «Ստեփանավան-2» փոքր ՀԷԿ-ի կառուցման նախագծի հասարակական լուսմների մասնակիցների նկատմամբ ճնշումների պատճառով պահանջում ենք լուսմներն անվավեր ճանաչել, <http://www.ecolur.org/hy/news/dialog-with-officials/demanding-to-annul-hearings-due-to-pressure-exercised-on-participants-of-stepanavan2-shp-public-hearings/4657/>

⁴¹ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ-ի սեպտեմբերի 1-ի, թիվ 1523-Ն որոշում, <https://www.e-gov.am/gov-decrees/item/2270/>



ՓՀԷԿ-երի ազդեցությունը համայնքների սոցիալական վիճակի վրա

Սոցիալական հարցումներ համայնքներում

Փոքր ՀԷԿ-երը մեծ լարվածություն են առաջացնում համայնքներում, քանի որ համայնքը թողնում են առանց ռոռզման եւ խմելու ջրի, ինչի հետեւանքով նվազում է գյուղմթերքների արտադրությունը եւ բնակիչների եկամուտը: Վատանում է համայնքի սանիտարական վիճակը, նկատվում է ՓՀԷԿ-ի աղմուկի ազդեցություն, բնակիչները գրկվում են հանգստի գոտիներից, վատանում է կյանքի որակը: Դրա դիմաց բնակիչները չեն ստանում փոխհատուցում եւ չունեն որեւէ շահ: Այս ընդհանրական դիտարկումների հիմնավորման նպատակով հարցումներ են անցկացվել 12 համայնքներում, ընդհանուր առմամբ 107 բնակիչների հետ: Հարցումներն անցկացվել են բազմաստիճան քլասթերային ընտրանքի հիման վրա⁴³:

«Արգիճի» ՓՀԷԿ-ի վերաբերյալ Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն եւ Մադինա համայնքների բոլոր 16 հարցվածներն ասացին, որ ՓՀԷԿ-ի կառուցումից հետո իրենց կյանքի որակը չի լավացել, իսկ 6-ը նշեց, որ վատացել է: 14 հոգի ասաց, որ ՓՀԷԿ-ի պատճառով ձկան պաշարները գետում արդեն իսկ նվազել են: 10 հոգի համոզված են, որ ՓՀԷԿ-ի ազդեցությամբ Արգիճի գետի սանիտարական վիճակը գնալով կվատանա: 13 հոգի նկատել է, որ ՓՀԷԿ-ն ազդում է իրենց ջրամատակարարման վրա: Այն հարցին, թե ի՞նչ խոստումներ են տվել ՓՀԷԿ-ը կառուցողները, 13 հոգի պատասխանեց, որ ոչ մի խոստում չեն տվել: 3 հոգի նշեց, որ խոստացել են ճանապարհները բարեկարգել, բայց չեն արել: Ընդ որում, ՓՀԷԿ-ին դեմ արտահայտվեց 9 բնակիչ, կողմ՝ 2, եւ 5 հոգի հրաժարվեց պատասխանել:

«Մարցիգետ-1» ՓՀԷԿ-ի վերաբերյալ Մարց գյուղի 15 հարցվածներից ՓՀԷԿ-ին դեմ էր 8 հոգի. «Մարցագետը գողանում են... Քանի անգամ համայնքը դեմ է կանգնել ՓՀԷԿ-ին...Էդ ՀԷԿ-ից մի երկու հոգու գրպանն է հարստանում... Ամբողջ ջահելությունը դեմ է... Մի երկու հոգի համաձայնություն են տվել, այն էլ դա իրենց ձեռք է տալիս, ու ամբողջ ժողովրդի անունից ներկայացնում են, որ գյուղը համաձայն է, բայց գյուղը համաձայն չէ...»: ՓՀԷԿ-ին կողմ էր 2 հոգի, ովքեր համոզված էին, որ պետք է աշխատանք ստանան ՓՀԷԿ-ում: 5 հոգի չցանկացան պատասխանել այս հարցին: «Վախացնելով ուզում են ցույց տալ, որ բոլորն էլ համաձայն են, բայց ոչ մեկը համաձայն չէ.. Վախացնելով իրենց գործը ուզում են առաջ տանել...», - ասում էին գյուղացիները: Այն հարցին, թե ինչպե՞ս կազդի փոքր ՀԷԿ-ը բնակիչների ապրելակերպի վրա, բացի 2 հոգուց 13-ը պատասխանել են, որ ՓՀԷԿ-ը կունենա բացասական ազդեցություն եւ իրենց կյանքի որակը կվատանա. «Որ էդքան ՀԷԿ կառուցել են, ժողովուրդը կարգին լույս էլ չի ունենում, մեկ էլ տեսնում ես՝ անջատում են...Լույսս ավելի է թանկացել: Որ

⁴² «Սպասվելիք արդյունքներ արդյունաբերության ոլորտում» <http://lori.gov.am/files/docs/4226.pdf>

⁴³ Հարցաշարը տե՛ս Հավելված 1-ում

կառուցեն, ինձ ինչ դրանից»: Այն հարցին, թե մասնակցե՞լ են հասարակական լուսամներին, հարցվածներից 6-ը պատասխանեցին, որ մասնակցել են, սակայն իրենց կարծիքը հաշվի չեն առել:

«Իջևան-1» ՓՇԷԿ-ի վերաբերյալ Իջևանի 7 հարցվածներից ՓՇԷԿ-ի կառուցմանը դեմ էին 5-ը, կողմ՝ 2-ը: 4 հոգի կարծում է, որ ՓՇԷԿ-ը կազդի ջրամատակարարման վրա: Ձկան պաշարների վերաբերյալ հարցվածներից 4-ը նշեցին, որ նկատվում է ձկան պաշարների նվազում: 3 հոգի նմանատիպ խնդիրներ չարձանագրեց: 4 հոգի նշեց, որ ՓՇԷԿ-ի կառուցումից հետո գետի սանիտարական վիճակը կվատանա: 5 հոգի կարծում են, որ ՓՇԷԿ-ը չի լավացնի իրենց կյանքի որակը: 2-ը կարծում են՝ կլավացնի:

«Վահագնի» ՓՇԷԿ-ի վերաբերյալ Վահագնաձոր համայնքի 6 հարցվածներից 5-ը նշեց, որ ՓՇԷԿ-ն իրենց վնաս չի տալիս, չի ազդում ջրամատակարարման վրա, բացի այդ, աշխատատեղ է ապահովում գյուղի բնակիչների համար: Դեմ էր 1 բնակիչ, ում տունը գտնվում էր անմիջապես ՓՇԷԿ-ի շենքի կողքին: Բնակիչը նշում էր, որ ՓՇԷԿ-ի աղմուկն իրեն եւ իր ընտանիքին շատ է խանգարում:

ՓՇԷԿ-ի վերաբերյալ համայնքում հասարակական լուսամներ անցկացվել են: Հարցվածներից մասնակցել էին 2-ը, 4-ը նշեց, որ տեղյակ չի եղել եւ ընդհանրապես իրենցից ոչ մեկ ոչ մի բան չի հարցնում: Ինչ վերաբերում է հարցերին՝ կապված գետի սանիտարական վիճակի փոփոխման, ձկան պաշարների նվազման, արտագաղթի ավելացման հետ, ապա 2 հոգի կարծում էին, որ գետի վիճակը կվատանա, 2-ը՝ կլավանա՝ հաշվի առնելով ընկերության խոստումները՝ կապված ջրատարի մաքրման հետ, 2-ը դժվարացան պատասխանել: Այն հարցին, թե ինչպես է փոխվել ձեր կյանքի որակը ՓՇԷԿ-ը կառուցելուց հետո, 4-ը պատասխանեցին, որ չի փոխվել, 2-ը որ լավացել է, սակայն, թե ինչով է լավացել, չպատասխանեցին:

Հարցումների ընթացքում պարզվեց, որ համայնքը ոչ խմելու, ոչ ոռոգման համար գետից չի օգտվում: Ավելին, համայնքը ոռոգման պահանջ էլ չունի, քանի որ ոչ այգիներ ունի, ոչ էլ մշակովի հողատարածքներ:

«Խաչաղբյուր-2» ՓՇԷԿ-ի վերաբերյալ Գետահովիտի համայնքում բոլոր 10 հարցվածներն էլ կողմ են արտահայտվել ՓՇԷԿ-ի կառուցմանը: Սակայն նրանցից եւ ոչ մեկը համոզված չէ, որ ՓՇԷԿ-ի կառուցումը չի ազդի իրենց ջրամատակարարման վրա: Ընդամենը 6 հոգի հույս են հայտնել, որ չի ազդի, 3-ը կարծում են, հնարավոր է, որ ազդի: 8 հոգի կարծում է, որ եթե ոռոգման սեզոնին ՓՇԷԿ-ը չաշխատի, ապա ՓՇԷԿ-ի կառուցումը գյուղատնտեսական արտադրանքի վրա ազդեցություն չի ունենա: Այն հարցին, թե նկատել են արդյոք ձկան պաշարների նվազում, 6 հոգի պատասխանեց, որ չեն նկատել, 2-ը նշեցին, որ գետում արդեն ձուկ չկա: Ընկերությունը գյուղացիներին խոստացել է ապահովել աշխատանքով, լուսավորության հարց լուծել, օգնություն տրամադրել: Հարցված գյուղացիներից 5-ը կարծում է, որ եթե խղճով աշխատեն, ապա իրենց կյանքի որակն էլ կփոխվի դեպի լավը, 2-ը նշել են, որ ՓՇԷԿ-ը չի փոխի իրենց ապրելակերպը, 3-ը դժվարացան պատասխանել: Իսկ այն հարցին, թե արդյոք ՓՇԷԿ-ի կառուցումը կազդի արտագաղթի վրա, 4 հոգի պատասխանել են, որ եթե աշխատանքով ապահովեն, մարդիկ չեն գնա, 2-ը նշել են, որ ժամանակը ցույց կտա, 4-ը դժվարացել են պատասխանել: 2013 թ. փետրվարի 17-ին անցկացված ՓՇԷԿ-ի հասարակական լուսամների ժամանակ 2000-ից ավելի բնակչություն ունեցող Գետահովիտի 1100 բնակիչ դեմ էր արտահայտվել ՓՇԷԿ-ի կառուցմանը:

«Կոշ» ՓՇԷԿ-ի վերաբերյալ Կոշ համայնքում 12 հարցվածներից ՓՇԷԿ-ի կառուցմանը կողմ էր 8 հոգի, 4-ը՝ տեղյակ չէին ոչ ՓՇԷԿ-ից, ոչ լուսամներից: ՓՇԷԿ-ի կառուցումից հետո ջրամատակարարման, գյուղմթերքի, ձկնային պաշարների վրա ազդեցությունը գյուղացիները դժվարացան գնահատել: Մեծամասամբ հնչեց «չգիտեմ» պատասխանը: 1-2 հոգի կասկածանքով պատասխանում էին, որ միգուցե ՓՇԷԿ-ը կունենա բացասական ազդեցություն՝ կնկատվի ջրի, ձկնային պաշարների նվազում: Հարցին, թե արդյոք կփոխվի ձեր կյանքի որակը ՓՇԷԿ-ի կառուցումից հետո, հարցվածներից 5-ը նշեց, որ կլավանա, եթե իրենց խոստումները պահեն՝ սեզոնին ոռոգման ջուր թողնեն եւ ջրանցքն էլ միշտ մաքրեն:

«Արփա-3» ՓՇԷԿ-ի վերաբերյալ նոյեմբերի 14-ին Ջերմուկի քաղաքատարանում անցկացված հասարակական լուսամներին Ջերմուկի 5394 բնակչից ներկա էր ընդամենը 1-ը, մնացածը Երևանից եւ Եղեգնաձորից ժամանած մասնակիցներն էին: Ջերմուկ քաղաքում 6

հարցվածներից 5-ն ընդհանրապես տեղյակ չէին լսումների մասին: Չնայած, որ 4 հոգի կարծում է, որ ՓՀԵԿ-ի կառուցումը կազդի իրենց ջրամատակարարման վրա, կնկատվի գետում ձկան պաշարների նվազում, այդուհանդերձ նշում են, որ ՓՀԵԿ-ի կառուցումը չի փոխվի իրենց կյանքի որակը: 6 հարցվածից ՓՀԵԿ-ի կառուցմանը կողմ արտահայտվեց 3-ը, 2-ի համար միեւնոյն էր, դեմ էր 1-ը:

Դարանակ» ՓՀԵԿ-ի վերաբերյալ Դարանակ համայնքի 15 հարցվածներից 10-ը դեմ են ՓՀԵԿ-ի կառուցմանը, 5-ը՝ կողմ: 7 հոգի համոզված են, որ ՓՀԵԿ-ի շահագործումը կազդի իրենց ջրամատակարարման վրա եւ իրենք ոռոգման ջրի խնդիր կունենան: 5 հոգի չեն բացառում վնասակար ազդեցությունը, 3-ն էլ նշում են, որ ՓՀԵԿ-ը նորմալ աշխատեցնելու պայմաններում նման խնդիր չի առաջանա: Հարցվածներից եւ ոչ մեկ չի կարծում, որ ՓՀԵԿ-ը դրականորեն կազդի ջրի որակի վրա: 4-ը համոզված են, որ ջրի որակը կվատանա, 6-ը հնարավոր են համարում ջրի որակի վատթարացումը: Հարցվածներից ոչ մեկ համոզված չէ, որ իրենց բերքը չի տուժի ՓՀԵԿ-ի կառուցումից, իսկ 10-ը նույնիսկ վստահ է, որ իրենք լուրջ խնդիրների առջեւ կկանգնեն: Այն հարցին, թե արդյոք կնկատվի ձկան պաշարների նվազում, 6-ը պատասխանեցին, որ արդեն իսկ գետում ձուկ չկա, 4-ը համոզված էին, որ կնվազի, 5-ը դժվարացան պատասխանել: Հարցումների ընթացքում պարզվեց, որ 8 հոգու աշխատանքի տեղավորման խոստումներ են տրվել, 3-ը տեղյակ էլ չէին, թե ով է կառուցողը: ՓՀԵԿ-ի կառուցումից հարցվածներից միայն 2-ը դրական ակնկալիքներ ունենին եւ կարծում էին, որ իրենց կյանքի որակը կլավանա: Այնինչ 10 հոգի համոզված էին, որ ՓՀԵԿ-ի կառուցումը արտագաղթի նոր պատճառ կդառնա:



«Շամիրամ-1» ՓՀԵԿ-ի վերաբերյալ Օհանավան համայնքի 20 հարցվածներից 19-ը դեմ էին ՓՀԵԿ-ի կառուցմանը, կողմ էր միայն 1-ը՝ Արագածոտնի մարզպետը: 19-ը հարցվածները համոզված էին, որ ՓՀԵԿ-ի կառուցումից հետո իրենք ջուր չեն ունենա հողագործությամբ զբաղվելու համար, կզրկվեն իրենց այգիներից՝ իրենց միակ եկամտի աղբյուրից: Այն հարցին, թե ՓՀԵԿ-ի կառուցումը կնպաստի՞ արտագաղթին, 19-ն էլ միաբերան նշեցին, որ 7 գյուղն էլ կարտագաղթի:

Այսպիսով՝ 12 համայնքներում անցկացված սոցիալաբանական արդյունքում պարզ դարձավ, որ մարդիկ հիմնականում դրական ակնկալիքներ չունեն ՓՀԵԿ-երի գործարկումներից, բացառությամբ մեկ, երկու համայնքների: Բնակիչները հիմնականում ՓՀԵԿ-երի կառուցմանը կողմ են արտահայտվել ՓՀԵԿ-երի տերերի, համայնքապետերի եւ տեղի «հեղինակությունների» ճնշումների պատճառով, կամ եթե չունեն ոռոգելի տարածքներ: ՓՀԵԿ-երին դեմ արտահայտված բնակչությունը նշեց հետևյալ պատճառները՝ ջրամատակարարման վատացում, կյանքի որակի վատացում, արտագաղթի հարկադրում, ձկնապաշարների կորուստ:

Հատուկ դեպքերի ուսումնասիրություն

Արագածոտնի մարզի 7 գյուղերի բնակիչներ դուրս եկան «Գահա էներջի»-ի կողմից Արզնի-Շամիրամ դոտացիոն ջրանցքի վրա «Շամիրամ-1» ՓՀԵԿ-ի կառուցման դեմ:

Գյուղացիները համոզված էին, որ ՓՀԵԿ-ի կառուցումից հետո իրենք ջուր չեն ունենա իրենց այգիների համար. «Վնասն արդեն կա, արդեն ծառերը տվել են հողի տակ, առանց ոչ մեկի կամքը հարցնելու: Մի 3-4 հոգի իրենց գրպանների համար կառուցում են, իրենց պե՞տք է, որ

3000 տնտեսություն վարի է գնալու: Բերել, ՀԷԿ են կառուցում՝ մեր այգիները չորացնեն, բնությունը վերացնեն: Մենք ստեղծում ենք բնություն, իսկ սրանք ավիրում ու քանդում են»⁴⁴: Ուշի, Օհանավան, Կարբի, Արտաշավան, Մաղմուսավան, Եղվարդ, Երզնկա գյուղերի բնակիչները 2014թ. մարտի 6-ին եւ 19-ին փակեցին Երևան-Ապարան ավտոճանապարհը՝ պահանջելով, որ ՓՀԷԿ-ը չկառուցվի: Միայն այն բանից հետո, երբ խնդրին միջամտեց երկրի Նախագահ Սերժ Սարգսյանը, «Գահա Էներջի»-ն դադարեցրեց շինարարական աշխատանքները:

«Մարցիզետ-1» ՓՀԷԿ-ի կառուցմանը դեմ դուրս եկավ Մարց գյուղը՝ բողոքելով, որ գյուղը զրկվում է գետից⁴⁵:



«Մարցէներջի» ՄՊԸ-ն էլ, որը պատրաստվում է կառուցել ՓՀԷԿ-ը, իր մարդկանց միջոցով սպառնացել է գյուղացիներին, ովքեր 320 դեմ ստորագրություն են ուղարկել ՀՀ բնապահպանության նախարարություն: 2013թ. նոյեմբերի 6-ին Մարց գյուղի բնակիչները բնապահպան ակտիվիստների հետ միասին, որպես բողոք, փակեցին Վրաստան տանող ավտոճանապարհը⁴⁶:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հասարակությունը, համաձայն Օրհուսի կոնվենցիայի 8-րդ հոդվածի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, իրավունք ունի մասնակցել ՓՀԷԿ-երի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներին: Սակայն հասարակական լուսմների անցկացման արարողակարգը ՀՀ կառավարության կողմից հաստատված չէ: Բնապահպանության նախարարության պաշտոնական կայքն էլ պատշաճ կերպով չի ծանուցում լուսմների մասին: Արդյունքում հասարակական լուսմներն անցկացվում են ինչպես պատահի, որոշումներն էլ ընդունվում են կամայականորեն:

Հաճախ ՓՀԷԿ-երի նախագծերը չեն տեղադրվում ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում, կամ տեղադրվում են այն ժամանակ, երբ հասարակական լուսմներն արդեն անցկացվել են:

Հատուկ դեպքերի ուսումնասիրություն

«Կոշ» ՓՀԷԿ-ի հասարակական լուսմները նշանակված էին 2013թ. դեկտեմբերի 6-ին, սակայն նախագիծը ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում տեղադրվեց դեկտեմբերի 13-ին: Այսպիսով, խախտվեցին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության

⁴⁴ «Կարբիի և Օհանավանի բնակիչները մտադիր չեն հանձնվել, միտքը մեկն է՝ ՓՀԷԿ չի կառուցվելու» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/water/karbi-and-ohanavan-villagers-donvt-intend-to-give-up-shpp-wonvt-be-constructed/5886/>


⁴⁵ «Մարց գյուղի դպրոցականներ՝ ՄԵՆՔ ԴԵՄ ԵՆՔ ՓՈՔԸ ՀԷԿ-ԻՆ» հրապարակում, <http://www.ecolur.org/hy/news/water/martz-village-schoolchildren-we-oppose-to-shp/4659/>

⁴⁶ «Պաշտոնյաները պատասխանատվություն են կրում Մարց գյուղի կոնֆլիկտի համար» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/biodiversity/officials-bearing-responsibility-for-conflict-in-martz-village/5534/>

փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, որոնք հստակ նշում են, որ «ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում լիազորված մարմինն իրազեկ է պահում ազդակիր համայնքի ղեկավարներին և հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին» (3-րդ կետ): «Ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը ծանուցումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լսումներ (որի արարողակարգը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը)՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության, լսումների տեղի և ժամկետի մասին» (4-րդ կետ): «Կոշ» ՓՉԷԿ-ի նախագիծը ներկայացված է KfW բանկին ֆինանսավորման համար:

www.mnp.am/?p=315

13.12.2013 ԿՈՇ ՓՉԷԿ ԱՐՉՆԻ-ՇԱՍԻՐԱՄ ՋՐԱՆՑՔԻ ԿՈՇ ԾՅՈՒՂԻ ԱՐԱԳԱՅՈՍԻ ԿՐԱ
Բանվորական նախագիծ
[ԲՆԱԳԱՀՊԱՆԱԿԱՆ ՖԻՆԱՎՈՐՈՒՄ](#)



Ս.թ. ղեկավարների 6-ին տեղի կունենան «Կոշ» ՓՉԷԿ-ի կառուցման վերաբերյալ հասարակական լսումներ

27.11.2013

«Հրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածով սահմանված կարգով 2013 թվականի դեկտեմբերի 6-ին ժամը 12.00-ին ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ գյուղապետարանում, տեղի կունենան «ԷՑ ԶԵՑ ԷՑ ՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Կոշ» ՓՉԷԿ-ի կառուցման նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Տեղեկատվության և նախագծային փաստաթղթերին ծանոթանալու համար դիմել ք. Երևան, Կոմիտասի 29, Կոշի գյուղապետարան, /հեռ. 22-02-18, 22-14-85, 22-15-68, 54-01-20/:

Լուրեր

27.03.14

Լրացուցիչ տեղեկատվություն «Պատասխանատու հանրաքվեի արդյունքները» համաժողովում ՀՀ բնապահպանության նախարար Արամ Գաբրիելյանի՝ լրագրողների տված պատասխանների վերաբերյալ

26.03.14

Անցկացվել է խորհրդակցություն ՀՀ բնապահպանության նախարարության տեսչական գործառնությունների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու խնդիրներով

Մեծ աղմուկ բարձրացրած «Ջերմուկ 1» ՓՉԷԿ-ի նախագիծն ընդհանրապես չտեղադրվեց ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում: Ավելին ՓՉԷԿ-ի կառուցումից 3 ամիս անց միայն անցկացվեցին հասարակական լսումներ:⁴⁷ Նշենք, որ այս ՓՉԷԿ-ի նախագիծը ներկայացված է KfW-ի բանկին՝ ֆինանսավորման համար: Նախարարության կայքում չտեղադրվեց նաև աղետալի վիճակում հայտնված Եղեգիս գետի վրա 9-րդ ՓՉԷԿ-ի՝ «Տիգրան Մեծ»-ի կառուցման նախագիծը: Վայոց ձորի մարզի Գոմք գյուղում էլ «Գոմք» ՓՉԷԿ-ի կառուցման աշխատանքները սկսեցին՝ առանց հասարակական լսումների անցկացման: «Մենք չենք էլ իմացել, որ ՓՉԷԿ է կառուցվելու, իմացանք, երբ արդեն սկսել էին շինարարական աշխատանքներ կատարել: Որպես առանձին հանրային լսում, որ ժողովրդին տեղյակ պահեն, թե ինչ է արվում, չի եղել: Ժողովրդին ոչ մի անգամ չեն հավաքել ու ոչինչ չեն ներկայացրել»,- ասում էին Գոմք գյուղի բնակիչները⁴⁸: «Գոմք» ՓՉԷԿ-ի նախագիծը ներկայացված է KfW-ի բանկին՝ ֆինանսավորման համար:

⁴⁷ «Ջերմուկցիներ՝ մի թե կարելի է այդքան չսիրել սեփական երկիրն ու բնությունը» հրապարակում, <http://www.ecolur.org/hy/news/water/jermuk-residents-whether-it-is-possible-not-to-love-your-country-and-your-nature/4238/>

⁴⁸ «Տենցա մտածել գեներալը՝ փոքր ՀԷԿ կառուցի» հրապարակում, <http://ecolur.org/hy/news/water/general-thought-like-that-to-construct-shpp/5428/>

«ԳԱՀԱ Էներջի» ընկերությունը նախաձեռնել էր «Շամիրամ-1» ՓՀԷԿ-ի կառուցումը Արզնի-Շամիրամ դոտացիոն ջրանցքի վրա, ծանր տեխնիկա էր մտցրել ՓՀԷԿ-ի կառուցման տարածք: Ընկերությունն իր գործողությունները բացատրում էր նրանով, որ դեռ արագահոս դոտացիոն ջրագծի անհրաժեշտ վերակառուցման աշխատանքներ է իրականացնում, որպեսզի հետո «համապատասխան հանրային լուսամների արդյունքում վերականգնվող էներգետիկայի զարգացման ծրագիր իրականացնի: Սակայն ո՛չ վերակառուցման, ո՛չ ՓՀԷԿ-ի նախագծերը բնապահպանական փորձաքննություն չեն անցել: Այս դեպքի ուսումնասիրության համար ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր ստեղծված հանձնաժողովի անդամ Ինգա Զարաֆյանն իր կարծիքում գրել է. «Կառավարությունը, չհասցնելով իրադարձությունների հետևից, ուշանում է իր սահմանումների և հիմնավորումների հարցում՝ կապված Օհանավանում և Կարբիում իբր «օրինական» շինարարության հետ: Խոսքը Արագածոտնի մարզում այդ երկու գյուղերի կողքին կառուցվող «Շամիրամ-1» փոքր ՀԷԿ-ի մասին է: Եվ նույնիսկ ոչ թե մեկ փոքր ՀԷԿ-ի մասին, այլ փոքր ՀԷԿ-երի մի ամբողջ կասկադի, որոնց խողովակների երկարությունը կկազմի 6 կմ և կձգվի գրեթե մինչև Արզնի-Շամիրամ ջրանցք:... Փաստն այն է, որ շինարարությունն անօրինական կերպով է սկսված: «ԳԱՀԱ Էներջի» ընկերությունը չունի փոքր ՀԷԿ-ի կառուցումը թույլատրող փաստաթղթեր, ինչպես օրինակ, հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի կողմից տրամադրվող լիցենզիա՝ ՓՀԷԿ-ի տեխնիկական պարամետրերով, կամ բնապահպանության նախարարության բնապահպանական փորձաքննության եզրակացությունը: Այն փաստաթղթերը, որոնց վրա հղում է անում ընկերությունը, ունեն գրոյական արժեք: Շինարարության համար թույլատվությունը տրված է Օհանավանի համայնքապետի կողմից: Բայց այդ դեպքում «Սևան-Հրազդանյան ջրառ» ՓԲԸ-ի տնօրեն Սամվել Հովհաննիսյանի պնդումը, որ չկա ոչ մի նոր շինարարություն, այլ կա միայն ջրատարի վերանորոգում, իմաստ չունի: Կա բնապահպանության նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվություն: Բայց ոչ ոք ցույց չի տալիս այդ թույլտվությունը, քանի որ նրա մեջ պետք է նշված լինի նպատակը՝ ինչ կարիքների համար են ջուր խնդրում: Եվ եթե թույլտվության մեջ նշված է «էներգետիկ կարիքների համար», ապա ոռոգման համակարգի վերանորոգման վերաբերյալ հայտարարությունը սուտ է: Եթե փաստաթղթում ոչինչ նշված չէ, ապա այն անվավեր է: Մինչև շինարարությունը ջուրը լցվում էր Արզնի-Շամիրամ ջրանցք մեկ արագահոսի միջոցով, որը գալիս էր Ապարանի ջրամբարից: Իսկ շինարարությունից հետո կլինի ջրի բաժանում. խողովակների միջոցով՝ ՓՀԷԿ-ի համար, իսկ հին արագահոսի միջոցով՝ բնակիչների: Եվ մեծ հարց է, թե ում օգտին կորոշվի ջրային շահերի այդ բախումը: Առավել ևս, որ նոր խողովակաշարը պետք է անցնի հողի տակով, որտեղ ոչ ոք չի կարող մտնել, որպեսզի պարզի, թե ինչքան ջուր է վերցնում ՓՀԷԿ-ը»:



ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի փորձագետներն ուսումնասիրում են միայն փորձաքննության ներկայացված փաստաթղթերը ըստ հաստատված ցանկի: Կոչ ՓՀԷԿ-ի հասարակական լուսամների

Ժամանակ միայն բնապահպանության նախարարության փորձագետը տեղեկացավ, որ բացի Կոշից եւս երկու համայնք համարվում են ազդակիր, քանի որ նախագծում այդ մասին ոչինչ գրված չի եղել⁴⁹:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փորձաքննական եզրակացություն տրամադրելիս՝ հաշվի չի առնվում ազդակիր համայնքի կարծիքը: Մարց գյուղը 2013թ. մարտի 13-ին՝ հասարակական լսումների ժամանակ, դեմ արտահայտվեց «Մարցիզետ-1» ՓՇԷԿ-ի կառուցմանը 320 դեմ ստորագրությամբ: Սակայն ՀՀ բնապահպանության նախարարությունը ՓՇԷԿ-ի նախագծին դրական եզրակացություն տվեց՝ հաշվի առնելով լսումների կեղծված արձանագրությունը⁵⁰:

Հասարակական լսումների ժամանակ ճնշումներ են գործադրվում լսումների մասնակիցների նկատմամբ: 2014թ. ապրիլի 10-ին «Իջեւան-1» ՓՇԷԿ-ի հասարակական լսումներին ներկա էին միայն կառուցողի մտերիմները, ովքեր խոչընդոտեցին լրագրողների մասնագիտական աշխատանքը, թույլ չտվեցին հարցեր տալ կառուցապատողին: Առանց պատշաճ քննարկման լսումներին ներկա կառուցապատողների մտերիմները կողմ քվեարկեցին, իսկ միակ դեմ քվեարկողի ձայնը չհաշվեցին: Լրագրողներին թույլ չտվեցին ծանոթանալ լսումների արձանագրության հետ: Բնապահպանության նախարարության փորձագետ Նազիկ Մկրտչյանը նշեց, որ լսումներն անցկացվեցին միակողմանի և հնարավոր է, որ չեղյալ հայտարարվեն⁵¹:

Բնապահպանության նախարարությունը մերժում է տրամադրել հասարակական լսումների արձանագրությունները, փորձագիտական կարծիքները եւ փորձաքննական եզրակացությունները:

Այսպիսով, անցկացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՓՇԷԿ-երի շահագործման արդյունքում չեն պահպանվում միջազգային զարգացման բանկերի կողմից մշակված ստանդարտները՝ Էկոլոգիական եւ սոցիալական ռիսկերի եւ ազդեցությունների գնահատման եւ կառավարման, ռեսուրսների ռացիոնալ օգտագործման եւ շրջակա միջավայրի աղտոտման կանխման, կենսաբազմազանության պահպանման եւ բնական ռեսուրսների կայուն կառավարման ստանդարտները: Բանկերը վերահսկողություն չեն իրականացնում իրենց տրամադրած վարկերով կառուցված ՓՇԷԿ-երում, սոցիալ-էկոլոգիական ռիսկերի գնահատական չեն տալիս եւ որպես հիմնական ռիսկ, վարկ տրամադրելիս, նայում են միայն վարկի վերադարձման երաշխիքը, որը ՓՇԷԿ-երի դեպքում դառնում է 100%-անոց երաշխիք: ՓՇԷԿ-երի շահագործումը խախտում է ՀՀ բնապահպանական օրենսդրությունը՝ ՀՀ ջրային եւ անտառային օրենսգրքերը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքները:

⁴⁹ Անտեղյակ համայնքներ, անտեսված բնակիչներ. հերթական փոքր ՀԷԿ-ը» հրապարակում, <http://www.ecolor.org/hy/news/water/unaware-communities-neglected-residents-another-shpp/5613/>

⁵⁰ «Մարցի գյուղապետը ստորագրել է արձանագրությունը՝ ի հակառակ բնակիչների կարծիքի» հրապարակում, <http://www.ecolor.org/hy/news/water/martz-village-head-signed-protocol-notwithstanding-villagers-opinions/4745/>

⁵¹ «ԷկոԼուրը պահանջում է չեղյալ հայտարարել «Իջեւան-1» ՓՇԷԿ-ի հասարակական լսումները (Լուսանկարներ)» հրապարակում, <http://www.ecolor.org/hy/news/water/ecolor-demanding-to-annul-public-hearings-of-vijevan1v-shpp/6065/>

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փոխել ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 927-Ն որոշումը էկոլոգիական թողքի վերաբերյալ (որպեսզի էկոլոգիական թողքը 50 տոկոսից պակաս չլինի), որպեսզի գետային էկոհամակարգը պահպանվի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբեր 8-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու վերաբերյալ առաջարկության մասին» 1300-Ա որոշումը, որով ՓՀԵԿ-երի հզորության չափն ավելացել է 10-ից մինչև 30 Մվտ:
3. Որոշել ՓՀԵԿ-երի համար արգելված գոտիները, որոնք ընդգրկում են հատուկ պահպանվող տարածքներ, անտառային տարածքներ, սողանքային գոտիներ, ջրաբանական խոցելի տարածքներ:
- 4 Արգելել նոր ՓՀԵԿ-երի կառուցումը եւ չերկարացնել կառուցված ՓՀԵԿ-երի լիցենզիաներն այն գետերի վրա, որոնք գտնվում են ճգնաժամային եւ աղետալի վիճակում գետի գերշահագործման պատճառով:
5. Սահմանել հստակ կարգ, որը թույլ կտա հաշվի առնել ազդակիր համայնքի բնակչության կարծիքը ՓՀԵԿ-ի կառուցման վերաբերյալ:
6. Միջազգային ֆինանսական ինստիտուտները մյուս շահագրգիռ կողմերի՝ ՀՀ բնապահպանության նախարարության, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ միասին պետք է պատասխանատվություն կրեն ՓՀԵԿ-երի գործունեության հետեւանքով առաջացած բացասական էկոլոգիական, սոցիալական հետեւանքների համար եւ ազգային ու միջազգային օրենսդրության խախտումների համար:
7. Ազատել Սեւանա լիճ թափվող գետերը փոքր ՀԵԿ-երից, արգելել այդ գետերի վրա նոր ՓՀԵԿ-երի կառուցումը, ապամոնտաժել անօրինական ՓՀԵԿ-երը եւ չերկարացնել գործող ՓՀԵԿ-երի լիցենզիաները:
- 8 Հրապարակային դարձնել ՓՀԵԿ-երին վերաբերող բոլոր պաշտոնական փաստաթղթերը՝ նախագիծ, հասարակական լուումների արձանագրություն, բնապահպանական փորձաքննական եզրակացություն: